

Եռ Եարք Զարդարեան Հրատարակութիւններու Թիւ 5

ՊԱՏԿԵՐԱԳԱՐԴ
ԶԱՅՆԱԳՐՈՒԱԾ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ

ԵՐԱՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Աշխատակցութեամբ — Զուրակահար և Նուազահան
ԱՀԱՐՈՆ ՄՄՐԼԵԱՆԻ և Շահօր Նրամիւսներու

Կը պարունակէ

Աղջային

Շեղափոխական

Նիւային

Կրօնական

Եղեր

Ա. ՊԵՂԻՍ

Տպագրութիւն Ա. ԿԱՐՈՅԱՆ

1919

Գին 40 դ.ր.



4-2-Ch 45

911

Նոր Շարֆ Զարդարեան Հրատարակութիւններու թիւ 5

ՊԱՏԿԵՐԱԳՐԻ
ՉՈՅՆԱԳՐՈՒԱԾ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ

ԽՐԱԲՐԴԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Աշխատակցութեամբ — Զուրականար և նույզանան
ԱՀԱՐՈՆ ՄՄՐԼԵԱՆԻ և Խանօր Խռամփեսներու

255-3

Կը պարունակէ

Ազգային

Յեղափոխական

Սիրային

Կրօնական

Երգեր

Ֆ. ՊՈԼԻՑ

Տպագրութիւն Ա. ԿԱՐԵԼԻ

1919



Գին 40 Լրc.

Ի ՏԱՐԱԺԱՄ ՄԱՀ
ԳԱԲՐԻԵԼԻ ԵՐԱՆԵԱՆ

Հիմնադիր հեղինակի

ՀԱՅԿԱԿԱՆ ՔՆԱՐԻ

Քու ցուրտ շիրմիդ վրայ ուր, վահ, կայ թաղուած,
Առօյդ հասակդ և սրբադ հուր երկնաւաց
Զէ թէ միայն ափոենք ծաղիկ լի ձեռքով,
Զէ թէ միայն արցունք անհուն ցաւերով.

Այլ և ձօնենք վշտահար
Երգերն անուշ՝ Քընարին,
Որոյ փափուկ թելերը
Դու հիւսեցիր սրտադին :

Այն նուազներն որ քու բերնէդ սըլացան,
Երթալ յողջոյն աւերակաց ցիր ու ցան
Լըսեց զանոնք ի գտամբանացն Հայրենիք
Եւ ափոփեցան Հայաստանեաց վեհ ոգիք :

Լըսէ զանոնք և դու այլ,
Մահուան քունէն արթընցիր,
Այն Քընարին թելերով,
Յանմահութիւն ե'լ թռիր :

1863

Մ. Պէտեկաթ. Ա. Ե. Խ. Ա.



Գիշեալ Բայրութ

ԶԱՅՆԱԳՐՈՒԱԾ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ

ԵՐԳ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

1861 ՄԱՅԻՍ 24

Tempo di Marcia

Ա - րի այ կա զնմը յա ռազ ըն թա նակը սահ մա նա գրութեան նոր բա րն մա նակը նոր ազդ եր զա նի փր կա բա ր կո չն որ և զի նոր ինակը ա նոր պար գի եց Ա կե բա րն կամք առ Բարձրան Սի տուած ու լ զմք մօր մա լ թանք ա նոր պար գի եց Ա կե բա րն կամք առ Բարձրան Սի տուած ու լ զմք մօր մա լ թանք բը ինա Ա կե բա րն կամք առ Բարձրան Սի տուած ու լ զմք մօր մա լ թանք բը ինա Կե ց է կե ց է կե ց է մի տ նայ ու սա մա նա գրութեան մի տ նայ ու սա մա նա գրութեան'

Արի՛ք Հայկացունք յառաջ ընթանանք,
Սահմանադրութեան նոր բարեւ մ'ալ տանք,
Ո՛ր ազգն երբ զԱնի փրկարար գոչեց,
Նո՛ր հոգի, նո՛ր կեանք Անոր պարգեւեց :

Եկէք բարեկամք, առ բարձրեալն Աստուած՝
Ուղենք մեր մալթանք սուրբ սրտէ բղխած :



Կեցցէ՛, կեցցէ՛ կեցցէ՛ միշտ,
Ազգն ու Սահմանադրութիւն :

Զըկանք, բռնութիւն վատթար վարչութեան,
Բերին մահն ի դուռն Հայոց ազգութեան .
Սահմանադրութիւնը եկաւ զայն վանեց,
Եւ կենաց ուղին մեր առջեւ հարթեց :
Յառաջիմութեան բացաւ ասպարէդ,
Ուր ամէն վայրկեան գոչել պարտ է մեղ .
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ,
Ազգն ու Սահմանադրութիւն :

Զընջեց ամենայն կարծիք անձնական,
Խեղդեց ամենայն ձայն անհատական .
Հրաւէր կարդաց Աստուծոյ ձայնին,
Առաջնորդ լինել գործոց ազգային :
Այն որ յԱստուծոյ ձայն տուաւ մեղի,
Մինէ թող առնու ձայնով մ'այնպիսի .
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ .
Ազգն ու Սահմանադրութիւն :

Հայերս անարգուած՝ գըրկեց բարձրացուց,
Մարդկային կոչման մեղ արժանացուց .
Շընորհեց մեղի դոր աղատն Աստուծած,
Մարդկութեան երկրորդ նրշանն էր գըրած :
Որուն շնորհեւ յարգ լստացանք մենք .
Անոր յարգ տալով ապրինք ու երգենք .
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ .
Ազգն ու Սահմանադրութիւն :

Դուն ալ Հայաստան, սիրուն հայրենիք,
Ա՛լ այսուհետեւ մի սրգար լըռիկ .
Զի ա՛լ գու որդիքդ նոր ոգետով բերկրեալ,
Զքեղ հարս կ'ուղեն տեսնել զարդարեալ :

Ալ մի՛ լար մայրիկ, լացդ ի պար փոխէ ,
Եւ ձայնով քաղցրիկ որդւոցդ հետ երգէ .
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ .
Ազգն ու Սահմանադրութիւն :

Հայե՛ր միանանք մեր մօրն հետ օրհնենք
Զամնոնք որ մեղի տուին սուրբ օրէնք .
Սահմանադրութեան բարեաց փոխանակ,
Թո՛ղ վարեն ուրախ կեանք մի փարունակ :
Թո՛ղ և մեր որդիք հետ անոնց անուտմն,
Բիւրաւոր տարիք օրհնենի ու կարդան .
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ .
Ազգն ու Սահմանադրութիւն :

Յ. Գ. Սլվածեան

ԱՆԴՐԱՆԻԿԻ ՔԱՅԼԵՐԳ

Ըստ մ. Առաքել Արքայի

Պաշ-նակցա կան խումբ թը-նակրմէք Սա սոն Մեր բաշ ըն կեր ներ մե-
գի կը պա-սն Անդրա-նի-կը բաշ իւր գին-ուր-ներ րով կը-պա սէ գար նան .
կը-զէ պա-տե-րաց. Անդրա-նի-կը բաշ իւր գին-ուր-ներ րով կը-պա սէ գար նան. կը-զէ պա-տե-րաց.

Դաշնակցական խումբ գընանք մենք Սասուն ,
Մեր քաջ ընկերներ մեղի կըսպասեն .
Անդրանիկը քաջ իւր զինուորներով ,
Կըսպասէ գարնան, կ'ուղէ պատերազմ :

Մօս է գարունը, շուտով կը բացուի ,
Հայու խօսքը քաջ շուտով կը լսուի ,

Ո՞չ, դէմքը վառողք արցունք ըսպի են.
Նա կ'արհամարէ ծիրանի՝ փառքեր,
Նա սև է հագեր :

Նա մեր հայ եղբարց արցունքն է քաւեր,
Ցոյց կուտայ մեզի արիւն ու աւեր,
Դիւցա՛զն մ'է որ գուրս թըռաւ դամբանէն,
Ո՞չ, թուր չէ՛ ձեռքն՝ այլ խաչ բռներ արդէն,
Զը ցայտեր աչքէն շանթեր, այլ սէ՛ր՝ գո՛ւթ .
Դողայ անկէ Քուրդ :

Նա կուգայ Հայոց մարգերէն կարմիր,
Ազատեց Քրդէն Հայը վշտակիր,
Խաչափայտով մը պանծացաւ յաղթող,
Հնչեցուց ի Հայս ազատութեան փող,
Տիսէ՛ք, քուրձ հագեր, կարծես ինք դրակ,
Բայց սիրտն է կրրակ :

Դայ Մասեաց սարդէն՝ նա ձախն ու աջը,
Մովսէսի քընարն, Ղեւոնդի խաչը,
Աստղի մը նայուածք, քընարի մը ձայն,
Ազեաց խորերէն կը սիրէ նա Հայն՝
Դեռ չը ճանչցա՞ք զայն, ճակատ' ք վշտակոծ,
Հրեշտակն է Հայոց :

Ահա կը հնչէ նորա հեշտ սրինդ,
Արձագանք կուտան Հայոց դաշտք՝ լերինք,
Երթանք իր շուրջը, Հայեր արտալած,
Զը խաբեր՝ մատներ նա մեզ օտարաց .
Զը սիրեր ուկի, փառք ու վաստ մարդիկ,
Հայուն է Հայրիկ :

Գլխիկը դըրած սըգաւոր սըքեմ,
Զը թափեր ճակաէն դեռ ալիք վըսեմ .

Բայց դէմքին վրայ կանուխ են փթթած
Սնցքի ու վշտի խորշոններ միշտ թաց,
Միակ վարձք մ'ունի այն է կոչել զինք՝
«Խըրիմեան Հայրիկ»

1869

ՊԵՏՐՈՍ ԴԱՎԻԴՅԱՆ

ԻԱՆԱՍՈՐԻ ՔԱՅԼԵՐԳԸ

Tempo di Marcia

Կուռեցէք, տղերք, կուռեցէ՛ք քաջ քաջ,
Անվեհեր կանդնած թչնամւոյն առաջ .
Յանկալի է մեզ միշտ ազնիւ մահը,
Հեռու մեզանից ոստիխն ահը .
Յառաջ խիղախենք իբրեւ նահատակ,
Ի զուր թող չանցնի մեզնից մէկ գնդակ :

Ահա՛, քրդերը փախչին սարսափած,
Ահա՛ դիմկներ արեամբ շաղախուած .
Կրակ տեղացէք անդադար կրակ,
Փառք մեր զէնքերին առատ է գնդակ,
Այս անդամին ալ ցոյց տանք թչնամւոյն
Թէ ինչ է Հայու ոյժն ու քաջութիւն :

Մեղ տօնախմբէն մեր նախնի քաջեր,
 Մեզի կըսպասն մեր հէկ եղբայրներ .
 Ազատ չը ծնանք, գէթ մեռնինք աղատ,
 Մեր սիրան ու հոգին պահենք անարատ .
 Դէ՞հ կոռէինք տըլերք մինչեւ շունչ վերջին .
 Արժանի լինինք փառաց պասկին .
 Մեռնինք յուսալով, մերն է ապագան,
 Մեռնինք, բայց կրցցէ՛, կրցցէ՛ Հայաստան .
 Այսպէս յորդորեց և ինկաւ արին,
 Թողլով մեղ անուն յիշատակ բարին .
 Անեղ կոռէի մէջ մի փոքրիկ հերոս,
 Անմոռանալին կարիճ Մարտիրոս :

II. b:

ՍԻՐԵՐԳ



Անա ելաւ լուսին արծաթ
 Մութ ամպերու ըստուերէն,
 Անա նաւակն ալ զեղազարդ
 Դուրս սահեցաւ ժայռերէն .
 Անուշ հոգիկ փըչէ յուշիկ
 Ու դէպ ինձ բեր բիւր ծիր ալիք:
 Նաւակին մէջ իմ զեզուհին,
 Փռուած անփոյթ լուսի տակ ,

Կը ձայնակցի իր կիթառին
 Հնչուն ձայնով մը յատակ .
 Անուշ հոգիկ փչէ յուշիկ,
 Ու դէպ ինձ բեր երգն անուշիկ:
 Զայնով կ'երգէ սէր ու գըգուանք,
 Համակ յուղում ու սարսուռ,
 Ա՛լ թօ՛գ աղջիկ երգդ ու նուագ,
 Բոց աչերըդ ինձ դարձուր .
 Անուշ հոգիկ փչէ յուշիկ,
 Ու դէպ ինձ բեր սէրն անուշիկ:
 ՇԱՅԻԹ

ՎԵՐՋԱԲԱՆ

Moderato

կը - սեց ամ - պի - ըը ս - կան տաս-կե-զըն ըը կընքն ու լըս-սին ալ - քս .
 իլ - լի ցըն մը - նա ցի նա նա ցի ըը - լիս մը - նես-նըս նո - ցիս,
 Անուշ հոգիկ փըչէ յուշիկ ինձ եւ սընը ամ ամ մէ մէ լըս-սին գը-լուս բայլ սըն .
 Անուշ հոգիկ փըչէ յուշիկ ինձ եւ սընը ամ ամ մէ մէ լըս-սին գը-լուս բայլ սըն .
 Անուշ հոգիկ փըչէ յուշիկ ինձ եւ սընը ամ ամ մէ մէ լըս-սին գը-լուս բայլ սըն .
 Անուշ հոգիկ փըչէ յուշիկ ինձ եւ սընը ամ ամ մէ մէ լըս-սին գը-լուս բայլ սըն .
 Անուշ հոգիկ փըչէ յուշիկ ինձ եւ սընը ամ ամ մէ մէ լըս-սին գը-լուս բայլ սըն .

Լըսեց . Ամպերը եկան ծածկեցին ,
 Երկինքն ու լուսինն աչքէս խրլեցին ,
 Մընացի մենակ՝ հոգիս վրրդոված ,
 Զեռները ծոցիս, գլուխս դարձ արած ,

Եւ այնուհետեւ ամէն իրիկուն,
Մընում եմ լուսնի խաղաղ ծագելուն,
Նորա տըխրամած դէմքը նայելիս՝
Յիշում եմ թշուառ վիճակը ազգիս։
Աւս, ցոլա՛, փայլէ՛, տիրադէմ լուսին,
Գուցէ քու փայլից փայլ տաս և Հային։
Պատմէ շատերուն Վարդանի մահը,
Կամ ի՞նչպէս կորսւ Հայ ազգի գահը,
Կամ ի՞նչ գեհ սիրով սիրում էր Վարդան
Հայրենի հողը, — Սշխարհն Հայաստան։

ԴԱՄԱՌՈՒԹՅԱՆ

S U L T H U R H Կ

Tempo di Charsia

Ցալ-վր - բի զա - ւակ Եմ զրդ քաղ - ըլ յու պէս շեմ թու լա - մոթ Աս - ըի
զա - սակափա - ըի որ դի հին քաղ և յոց Եմ մը - նա - ցըրդ Ան ըի զա - սակափա - ըի
որ - դի հին քաղ և յոց Եմ մը - նա - ցըրդ Ցալ-վր - ըի կի զա սակ Եմ
քաղ Ցեմ խո նաբ - դր կա - տին ա - ռաջ Քա - րու լե - ռանց Եմ ա - զատ լաձ
Ցեմ տե - սեր ու ա - ռօր ու մամ Հայ աղ - բը նիք, վայ աղ - բը տիք Ցալ-վր -
ըի կի զա - սակ Եմ քաղ Ա զա տութեամփրոյն և մար Ա - կիք դէս ինձ յա - ռաջ յա - ռաջ

Ցալւորիկի զաւակ եմ ղորդ,
Քաղըրցու պէս չեմ թուլամորթ,
Սարի զաւակ, քարի որդի
Հին քաջ Հայոց եմ միացորդ։

Ցալւորիկի զաւակ եմ քաջ,
Չեմ խոնարհիր վատին առաջ,
Քարուտ լերանց եմ ազատ լաճ,
Չեմ տեսել ոչ արօր, ոչ մաճ։

Հայ աղբըրտիք, վայ աղբըրտիք,
Ցալւորիկի զաւակ եմ քաջ.
Աղատութեան սիրոյն համար,
Եկէք դէս ինձ, յառաջ, յառաջ։

Երբ իմ աչքերս բացի աշխարհ,
Ազատ տեսայ մեր սար ու քար,
Մինչ չփակեմ աչքս ի խաւար
Պիտ' չի կոխէ հոս ոտք օտար.

Իմ մամ ծնաւ զիս սարերու ծոց,
Էնկոյզի կոճղ մ'ինձ օրօրոց.
Տրկլող ծնայ, մեծցայ տըկլող։
Կեանքիս բաժինն է կոխւ ու բոց.
Հայ աղբըրտիք, վայ աղբըրտիք, ևն։

Ոտքըս բոպիկ, կուրծքըս միշտ բաց,
Ի՞նչ փոյթ թէ քոյրս ալ մերկ մնաց,
Ի՞նձ մօտ մէկ է արեւ, փուք, ցուրտ,
Բաւ է չիշիէ, Պարուր կամ Քուրդ։

Իմ կեանքըս խիստ է եւ չարքաշ,
Փափուկ կեանքի բնաւ չեմ վարժ,
Բնակարանս է ապառաժ,
Էնկերս՝ մրրիկ ու երկրաշարժ։
Հայ աղբըրտիք, վայ աղբըրտիք, ևն։

Հարբստութիւն, ուսում, հանճար,
Փառք ու պատիւ չին ինձ համար,

Բա՛ւ է ունիմ տէզ , թուր , խանչար ,
Յնաւ չի խրոխտար վըրտս օտար .

Սիրած զէնքերս չեմ ձգեր ձեռքէս ,
Առիւծն անվախ չէ ինծի պէս ,
Կը սիրեմ որս , կախւ , աւար ,
Կը սպասեմ երբ ընկնի հաշար .

Հա՛յ աղբըրտիք , վա՛յ աղբըրտիք , ևն .

Թող այլք բնակին հովիտ ու դաշտ ,
Վատ անգոթին հետ լինեն հաշտ ,
Ես պիտ' մընամ միշտ ամնուած
Թէե վրաս դայ քըսան վաշտ :

Յորենի տեղ կ'ուտեմ կորեկ
Երկաթ ծեծեմ գիշեր ցորեկ .
Եինեմ փետատ , փոխ , խաչերկաթ ,
Ծանր է դատումս , բայց եմ ազատ :
Հա՛յ աղբըրտիք , վա՛յ աղբըրտիք . ևն .

Այծեամի պէս կը ցատկուտեմ ,
Առիւծի պէս կը մռնչեմ ,
Ծովի նման կը փրփրիմ ,
Կայծտկի պէս կը հարուածեմ .

Կուոյ դաշտը բողդն է կեանքին ,
Երք կը ծագի արշալոյսր ,
Կամ աւետիս տայ դրօշակին ,
Կամ պաղ տեմնէ քու երեսը :
Հա՛յ աղբըրտիք , վա՛յ աղբըրտիք , ևն .

Հաւար ընկնի երթամ յառաջ ,
Սասնոյ յերինք հանեն հա՛ռաջ ,
Հառաջ հանեն եւ ներկուին
Իւր կտրճի արիւնով քաջ :

Կտրճին սիրտ՝ կտրիմին ձեռքք ,
Ինչ վոյթ քաջին հաղար մէկ վէրք
Մէկ Հարուածին կուտաս հարիւր
Սպաւին լէշ կանես հաղէր :

Հա՛յ աղբըրտիք , վա՛յ աղբըրտիք , ևն .

Մ. ՏՈՒՄԱՑԵԼԻ (Պերա Մոււլու)



ՄԻԹՈՑԵԼ ՆԱՐԱՍՈՆԴԱՆՑ

Մեծ ախոյիան Հայ պատագրորեան

1820—1866

ԻՏԱԼԱՑԻ ԱՂՋԿԱՅ ԵՐԳ

Sento de Harca

Մեր այ բօ նիք թը ուստան-տէք իւր թը նամ-եաց ոտ - նա - կին .
իւր որ դի - քը արդ կան-յում է հա - նել իւր վրեւ քեն ու ոյն
իւր որ դի - քը արդ կան-յում է հա - նել իւր վրեւ քեն ու ոյն :

«Մեր հայրենիք, թշուառ անտէր,
Մեր թշնամուց ոտնակոխ,
իւր որդիքը արդ կանչում է,
Հանել իւր վրէժ, քէն ու ոխ :»

«Մեր հայրենիք շղթաներով
Այսքան տարի կապկապած,
իւր քաջ որդոց սուրբ արիւնով
Պիտի լինի ազատուած :»

«Անա՛, եղբայր, քեղ մի գըրօշ,
Որ իմ ձեռքով գործեցի,
Դիշերները ես քուն չեղայ,
Արտասուքով լուացի :»

«Նայիր նորան, երեք գունով՝
Նուիրական մեր նըշան,
Թո՞ղ փողփողի թշնամու դէմ,
Թող կործանուի սէդ հըսկան :»

«Ինչքան կին մարդ, մի թոյլ էակ,
Պատերազմի գործերում
Կարէ օգնել իւր եղբօրը,
Զանց չարեցի քո սիրուն :»

«Անա՛ իմ գործ, անա՛ իմ գըրօշ,
Ճուտ ձի հեծի՛ր քաջի պէս,
Դընա վըրկել մեր հայրենիք,
Պատերազմի վառ հանդէս :»

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ' մեռնէ,
Բայց երանի՛, որ իւր ազգի
Ազատութեան կը զոհուի :»

«Դընա՛, եղբայր Աստուած քեղ յոյս,
Եզդի սէրը քաջալեր,
Դընա՛ թէեւ չեմ կարող գալ,
Բայց իմ հոգին քեղ ընկեր :»

«Դընա՛ մեռիր դու քաջի պէս,
Թող չը տեսնէ թշնամին
Քո թիկունքը, թող նա չասէ
Թէ վատ է իտալացին :»

Ասաց, տաւեց օրիորդը
իւր եղբօրը մի գըրօշ,
Մետաքսից էր, ազնիւ գործած,
Ուր երեք գոյն կար որոշ :

Եղբայրն առաւ և ողջունեց
իւր սիրական քընքուշ քոյր,
Առաւ զէնքը, սուր, հըրացան,
Հեծաւ իւր ձին սեւաթոյր .

«Քուրիկ,—կանչեց քաջ պատանին,—
Մընաս բարեաւ, սիրական,
Սյու գրօշակին պիտի նայի
Ամբողջ բանակ իտալեան :»

Նա սուրբ է ինձ, երբ մըկրտուած
Արտասուքով ու կընքած,



Դու յանձնեցիր ինձ յիշատակ,
Հայրենիքի նուիրուած:
 «Թէ մեռանիմ, դու մի՛ սըգար,
Իմացիր որ տարեցի
Դէպ ի մահու արքայութիւն,
Իմ հետ քանի թըշնամիւ»
 Ասաց, վազեց դէպ ի հանդէս
Աւստրիացոց յանդիման,
Իւր արիւնով գընել յաւէրժ,
Ազատութիւն իտալեան:
 Ո՛չ, իմ սիրտը կըտրատվում է
Տեսանելով այսպէս սէր,
Դէպ ի թըշուառ մի հայրենիք,
Որ ոտնակոխ եղած էր:

Սորա կէսը, կէսի կէսը,
Գէթ երեւէր մեր ազգում.
Բայց մեր կանայք... ուր, Եղիշէ,
Ուր մեր «Տիկնայք փափկասուն»
 Ո՛չ... արտասուք ինձ խեղդում են,
Այլ չեմ կարող բան խօսել.
Չէ... թըշուառ չէ իտալիան,
Եթէ կանայք այսպէս են:

Թարգմ. յիշալ. Կոմի Էմիլանուել
Մ. Ալբանուել

1861



Ա. Զ. Ա. Տ ՈՒ Թ Ե Ա Ն Ա Ր Ա Կ Ի Բ

Tempo di Marcia

Ե զն հայեր և ուր և ի ը-րացոն Տաճկահայա-տա-նը գործ է մի ձայն:
Ա սի լու թըն թում և հայրական վահանակ պահանակ անձագանատան:

Ի զէն հայեր, ի սուր և ի հրացան,
Տաճկա-Հայաստանից կոչում է մի ձայն.
Լեռից լեռ թնդում է անեղ հրաման,
«Թուէ՛ք հայեր, թուէք՝ դէպի Հայաստան» . . .

Արեւելք, արեւմուտք, հարաւ և հիւսիս,
Դպրդաց ու թնդաց քաղցր աւետիս:
Հայկաց քաջ զաւակաց առոյգ կուրծքերից
Ազատութիւն հնչեց ամէն կողմերից:

Այումբ-իսումբ հայեր դէպի Տաճկա-Հայաստան,
—Փրկութեան աւետիք առած ի բերան—
Դիմում են ցնծութեամբ իբրեւ հարսանիք,
Աւխտած սուրբ արիւնով փրկել հայրենիք:

Տաճկա-Հայաստանը ստքի է կանգնում,
Առիւծաբար վրէժ, վրէժ է կանչում,
Արիւնով ներկուում են բոլոր դաշտերը.
Արիւն են լոկ հոսում բոլոր գետերը.

Թշնամին զարհուրւած փախուստ է դիմում
Անթիւ աւար և գանձ հայերին թողնում.
«Յաղթութիւն, Յաղթութիւն», գոչեցին միաձայն,
«Թշնամին կորած է, կեցցէ Հայաստան» . . .



ԶԱՅՆ ՏՈՒՐ

A musical score for 'Zayn Tur' in 2/4 time. The music consists of four staves of Armenian folk-style notation. The lyrics are written below each staff in Armenian. The first staff begins with: Ցայն տուր ով վակ ինչ չեւ լում ես ող բա կից... Ա նեւ...

Չայն տուր, ո՛վ ծովակ, ինչո՞ւ լուռմ ես,
Ողբակից լինել չկամի՞ս դժբաղդիս,
Շարժեց' էք զեփիւռք, ալիքը վէտ վէտ,
Խառնեց' ք զարտասուս այս ջրերի հետ :

Հայաստանի մէջ անցքերին վըկայ ,
Սկզբից մինչ այժմ, ինդրեմ, ինձ ասա',
Միթէ միշտ այսպէս պիտ՝ մնայ Հայաստան ,
Փըշալից անպատ երեմն բուրսաստան :

Միթէ միշտ այդպէս ազգը խղճալի ,
Կը լինի ծառայ օտար իշխանի :
Միթէ Աստուծոյ աթոռին մօտին
Անարժա՞ն է Հայն և Հայի որդին :

Արդեօք գալո՞ւ է մի օր ժամանակ .
Մասիսի գլխուն տեսնել մի դրօշակ ,
Եւ ամեն կողմից պանդուխտ ազգայինք ,
Դիմեն դէպ' իւրեանց քաղցըր Հայրենիք :

ԲԱՅՆԻ

ԵՐԳ ՊԱՆԴՈՒԽՏ ՊԱՏԱՆԵԿԻ

A musical score for 'Pandukt' in common time. The music consists of three staves of Armenian folk-style notation. The lyrics are written below each staff in Armenian. The first staff begins with: Եր մեռ նակ մի մեռ նակ դու գար նաև սի բուն մըռջնակ .

Երիծեռնակ, ծիծեռնակ,
Դու գարնան սիրուն թըռչնակ,
Դէպի ուր, ինձ ասա',
Թըռչում ես այսպէս արագ :

Ա'ն, թըռիր ծիծեռնակ,
Ծընած տեղըս Աշտարակ,
Անդ շինի՛ր քո բոյնը ,
Հայրենի կըտուրի տակ :

Անդ հեռու ալեւոր
Հայր մ'ունիմ սըզաւոր ,
Որ միակ իւր որդուն
Սպասում է օրէ օր :

Երբ տեսնես դու նորա ,
Ինձնից շատ բարեւ արա' .
Ասա' թող նըստի լայ ,
Իւր անբաղդ որդու վըրայ :

Դու պատմէ՝ թէ ինչպէս ,
Աստ անտէր ու խեղճ եմ ես ,
Միշտ լալով , ողբալով՝
Կեանքս մաշուել , եղել է կէս :

Ա՛խ , Սասունցիք , քաջ Սասունցիք
Զեր արիւնին մենք զուրպան ,
Հնչակեան սուրբ սերմեր ծըլին ,
Ազատութեան մենք զուրպան :

Քիւրաը տեսաւ և կատաղեց ,
Զօրքեր հանեց բիւրաւոր ,
Յիսուն հազար զօրքեր կանչեց ,
Արիւնարբու զօրաւոր :

Եւ Սասունը պաշարեցին ,
Այն վայրէնի քիւրանը .
Թնդանօթներ որուացին՝
Քարքանդ ըրին գիւղերը :

Ա՛խ , Սասունցիք , քաջ Սասունցիք ,
Զեր արիւնին մենք զուրպան ,
Ա՛խ սուրբ հողիդ անման որդիք՝
Դիակներուդ մենք զուրպան :

Մօր արգանդը վատը պատռեց :
Գլուխներ անցուց նիզակով
Մինչ վերջին շունչ Սասուն կռուեց ,
Ազատութեան կարօտով :

Եւ արիւնը գետի նման
Թրջեց Սամնոյ վեհ սարեր ,
Հայք բիւրաւոր կոտորուեցան ,
Դարձ բոնութեան սուրբ զոհեր :

Ա՛խ , քիւրտ ու վատ բռնաւորներ
Նզովք ըլլայ ձեր գլխուն ,
Միշտ կտրիճ են Սասունցիներ ,
Նզովուի , Զէքի՛ , քո անուն :

Եւրոպ տեսաւ ցնցեց անդէն ,
Ապշած նայեց Հայերուն ,
Տեսաւ վիճակ գէշ է թուրքին ,
Խորհեցաւ իր շահերուն :

Հայու արեան չը հաւատաց
Եւ յանձնախումբ մը ծնաւ ,
Թուրքն ալ առաջ ինկաւ ինդաց
Զիւնոտ լեռներ ցոյց տուաւ :

Ա՛խ , Եւրոպա , մօր մը պէս խորթ
Հայ գիւղէներ կը ծաղրես .
Թուրքին կ'ընտրես քեզ առաջնորդ
Այս ինչ կատակ մեղ կ'ընես :

Կեցցէ կոխւ , Կեցցէ արիւն ,
Այս է ճամբան միշտ մեզի ,
Մեր արիւնը Եւրոպային
Անշուտ թէ քիչ կը թուի :

Ազատութեան համար անման
Թող ելլէ ողջ Հայաստան ,
Մեր արիւնով է մեզ ներկած ,
Եահակնդիր Եւրոպան :

Սասունցի կին , Սասունցի քաջ ,
Զեր արիւնին մենք զուրպան ,
Հնչակեան սուրբ սերմեր ծլին ,
Ազատութեան մենք զուրպան :



ԱՅՐԻԲՆ ԱՊԼ ԲԸԼ

Songlets.

Արշակուր նորդն բացւաւ,
Ամպու զամպէն ձօն կուգայ,
Ալ ձին եկաւ անտէր եկաւ,
Ախ իմ եարը տուն չեկաւ,

Էսյուր բացւաւ գուռը բացւաւ,
Ալ ձին քրտնած ներս ինկաւ,
Սիրուն կրծքին վէրք ստացած,
Սրիւն թաթախ ներս ինկաւ :

Ախ սիրուն ձի գու ինձ ասա,
Ո՞ր տեղ թողիր իմ եարը,
Ար ձորի մէջ ո՞ր քարի տակ,
Անտէր թողիր իմ եարը :

Ամպեր եկաւ մութը պատեց,
Մինակ նատած կուլամ ես,
Միրելիս, կորած եարիս,
Մուգ ու շիվան կ'անեմ ես :



ՄԻՐԱՀԱՐԻՆ ՆԱԽԱԿԵ

Moderato

Կը ճի մէ յաւա կը մեղ նոր միս կը ուա նի
Նուրա մէ յաւա նուրա մա յաւա նի :

Լըճի մէջ նաւակը
Մեղմ հողմիկ կը տանի,
Նորա մէջ նատած է
Սիրահար պատանի :

Պատանին ձեռքն ունի
Կիթարա ու կ'երգէ,
Իսկ քամին կը փախցնու
Նաւակը եղերքէ :

Լըճակին մէջը կայ
Քարաշէն մի ամբոց,
Սիրունոյ բնակարան
Հանապազ փակ ու գոց :

Պատանւոյ նաւակը
Դէպ ամբոց կը վագէր,
Ուր նորա անձկալին
Սըրտատրոփ կը սպասէր :

Մեղմ հողը աւելի,
Աւելի սաստկացաւ,
Երկինքը թուխալ պատեց,
Փոթորիկ բարձրացաւ :

Ալիքի լեռները
Գոռակով կը ծրիան,
Պատանին աներկիւղ
Կը նուագէ կիթարան :

Հուսինը՝ ամպերի
Տակերէն երեցաւ,
Առակալի աղէտի
Պատկերը բացուեցաւ :

Կէս ձամբան ալիքը
Նաւակին խրփուեցան,
Նաւակը փշշրեցին,
Յոյս չի կայ փրկութեան :

Պատանին աչքերը
Լուսնեակին բարձրացուց,
Կիթարի լարերը
Նա ուժգին հընչեցուց :

«Տա՛ր վերջին խօսքերը»
Անձկալւոյս, ով լուսին,
Թէ՛ քաղցրիկ անունըդ
Ցիշելով կը մեռնիմ :

Դադրեցաւ փոթորիկ,
Ու ալիք պառկեցան,
Ջրի վրայ կըտորտանք
Նաւակի երեւցան :

Սիրուհին սըրաատրով՝
Նայեցաւ լըճակին,
Հասկացաւ զառնութիւն՝
Իւր անբաղդ վիճակին :

«Խրարմէ բաժնեցին
Մեզ աշխարհ և այս կիանք,
Գէ՛թ մահով այսուհետ
Զըրի տակ միանանք»

Ասաց, և աղաղակ
Բարձրացուց նա ուժգին,
Գըլորվեց, զո՞ն եղաւ
Անկուշտում ծովակին :

ԳԱՐԱՐԱ-ՔԱՐԱ-ԳԱՐ



ԵՐԿ

ՆԱՀԱՏԱԿԱՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ

H. SINANIAN.

Allegretto.

INTRODUCTION.

Fine.

Ա զա գու բեան սի բոյ հա մա օսա ա որե մեր ըափ ուն զան
Ա մու հայ ըեւ ու զա սակ ներ և կան այս մեր ըազ ուն զան
Ա մու հայ ըեւ ու զա սակ ներ և կան այս մեր ըազ ուն զան

reco nū.

Ազատութեան սիրոյն համար շատ արիւններ թափ-
ուեցան
Անմեղ հայեր ու զաւակներ եկան այստեղ թաղուե-
ցան : (կրինէ)

Ահա եղբարք ես ալ կ'երթամ ազգիս համար մեռնելու ,
Ազատութեան սիրոյն համար ամբողջ կեանքըս զոհելու :

Դերեզմանիս հողին վրայ թափէ արցունք հայր և մայր ,
Սրբուէ ծաղիկ բուրումնաւէտ նահատակ եմ ես յաւէտ :

Ահա այսօր Հայ եղբայրներ կուգան այստեղ ողբալու .
Նահատակաց հողին վրայ ազի արցունք թափելու :

Ո՞վ եղբայրներ դուք ալ ելեք գերեզմանին խորերէն ,
Ուրախացէք և ցնծացէք Ազատութեան կոչերէն :

ՄԱՂԹԱՆՔ

Նահատակաց յիշատակը օրհնեալ ըլլայ յաւիտեան ,
Եւ արժանի անոնց հողին Երկնից Սուրբ Արքայութեան :

1908 Օգոստոս 8

ԴՐԻԳՈՂԻ ԿԻՒՄԻՇԵԱԾՆ



ԽԱՆԻ ԵՐԳԸ

Moderato

Խուսին չըկար , մութ գիշեր էր ,
Մի խումբ կ'երթար արագ արագ .
Տեսանք որ քաջ Խանի խումբն էր ,
Զիսուած էին բոլոր նրանք :

Կեանքերը ազգին նուիրած ,
Կըտրիճ Խանն առաջ ընկած .
Գնում էին Տաճկաց սահման ,
Թըռչում էին ինչպէս կրակ :

Հըրացանները ուսերին ,
Դրօշակը պարողել էին .
Գնում էին ուրախ զուարիթ ,
Ազատութիւն երգում էին :

Մութ անտառից անցնում էին ,
Ամէն մէկը առիւծ էին .
Նժոյգ ձիանց վրայ նատած ,
Մերկ սըրերը քաշել էին :

Երբ քաջ Խանը ելաւ Բասեն ,
Թնդանօթներ արձակեցին .
Հայ քաջերի մօսիններից
Դնդակները գուգուացին :

Ահեղ կոիւն ահա սկսեց ,
Երկու անյազթ թշնամեաց մէջ .
Թուրք զօրքերին դիմագրեցին
Փառաց պսակ վաստակեցին :

Երբ քաջ Խանը հրահանգ կուտար ,
—Արի՛ք սովուծներս իմ քաջ .
Մտան թշնամու խիտ շարքեր ,
Այսորեցին ձախըն ու աջ :

Երբ քաջ Խանը «ուռաջ» գուաց ,
Թշնամիքը մոլորուեցան ,
Հաղարաւոր տաճիկների
Գլուխները ջախջախուեցան :

Զերմ եռանդով կռւում էին,
Սրտերումը կար շատ պահանջ,
Փախչում էին տաճկաց զօրքեր,
Չէին կարող կանգնել առաջ :

Կեցցէ Խանը իւր խմբովը,
Սարսափ թողեց Բասենումը,
Երեք օր ու գիշեր կռուեց,
Աչքերիցը կտրեց քունը :

Հայաստանի հողի վրայ,
Քաջը թափեց իւր արինը,
Միճազ, յիշէ չը մոռանաս,
Կտրիծ Խանի քաջ անունը :

Յ Ո Յ Ս

Ա - հա կեր թամ փ - րն լ մայր . ազ - զիս հա - մար մեռնե - լու
Քաջ ըն - կի - րո քըս մի - ա սին ան - գութ թուր քին շար դա - լու :

Ահա' կ'երթամ սիրելի մայր,
Ազգիս համար մեռնելու
Քաջ ընկերօքս միասին,
Անդութ թուրքերն ջարդելու .
Մի լար, մայր իմ, մ'ողբար մայր իմ,
Վերադարձիս ըսպասէ,
Ազգիս հայոց ազատութեան,
Տիւ և գիշեր աղօթէ :

Ահա կ'երթամ, սիրելի քոյր,
Երպատակը է բարի,
Չենք դիմանար, մենք գերի ենք,
Իբր վեց հարիւր տարի .

Մի լար, քոյր իմ, մ'ողբար, քոյր իմ .
Վերադարձիս ըսպասէ,
Ազգիս հայոց ազատութեան,
Տիւ և գիշեր աղօթէ :

Եերաստիա երբ կ'երթայի
Երկու օրէն դառնայի,
Երկու օրս ալ կ'ըլլար տարի,
Ես քեզ շատ կարօտնայի .
Մի լար, մայր իմ, ևն :

Ելլէի լեռանը վըրայ,
Քար մը զարնէի գըլխուս,
Իմ գըլխուս եկած ձիւները,
Մասեաց գագաթն ալ չըկայ .
Մի լար, մայր իմ, ևն :

Պարտէզիս մէջ երկու ծառ կայ,
Տեսնողին զարմանք կուտայ,
Հայ քաջերու արիւնովը
Կարծես ներկած ճիւղեր կայ :

Արդեօք այս մեր քաշածները
Պիա' վերջացնե՞ս, ո՞վ Աստուած,
Գուցէ ողջ ողջ պիտի տեսնենք
Հայ դրօշակը պարզուած :





ԵԳԻՒԱ Մ. ՏՆՏԵՍԵՍԻՆ

1834—1881

Հայ գրականութեանիւ երածըութեան ուժեղ դէմքեւն, տպագրիչ,
ուսուցիչ, ազգային գործիչ եւ վերշապիչ Հայ Յեղափոխութեան
նախակարապետ։ 1881 ին իր հրատարակած նոր երգօրուն ՀԱՅՈՅ
անուն գրքին համար կը բանաւելուի եւ բանի խոնաւ մքնոյութին
մէջ կը զոհուի՝ այդ կերպով բանալով հայու սեւ նակատագրին դառն
ուշաբը՝ բանի, ախորի, ջարդի ու բալանի։



ԳԻՒՂԱԿԱՆ ԱՂՋԻԿ

ԽՈՎԱԿԱՆ

6-Մ.ՏՆՏԵՍԵՍԻՆ

Գիւղական ամ ևն զամ-բիւ-լա շն Ոկ նաւ աս զամ-
բիւ լա ի նո յոց երկ յուսամց հայ տիկնայք եւ պարունակութեան
բարձը գին տայցէն իս սի բու զայ բիւ լա նո զամ-բիւ
աս զայ բիւ աս զայ բիւ յուար ազ ի նեւ ի

Գիւղական աղջիկ եմ ես զամբիւղաէն
եկեալ ասա զամբիւղօք ի Հայոց երկրէն,
Յուսամ զի Հայ տիկնայք և պարոնայք Հընդկաց
Բարձր գին տայցէն իմ սիրուն զամբիւղաց։
Ա՛ռ զամբիւղ, ա՛ռ զամբիւղ,
Ա՛ռ զամբիւղ յօտար աղջկանէն։

ԶԱՐԱՐԱՍ և զԵՓՐԱՍ և զԾԻՋՐԻՍ թողի,
ՄԻԱՅՆԱԿ շըրջիմ ասա յեղերս Գանգէսի,
Պանդուխտ եմ, օգնեցէ՛ք անտերունչ անձինս,
Զի ձնողք ձեր յառաջ ասա պանդուխտ էին։
Ա՛ռ զամբիւղ, ա՛ռ զամբիւղ ևն։

ԶԱՄԲԻՎՂՔ իմ են յարմար ասղնագործութեան,
Պանել անդ զմատնոց, ըզթել, զասղաման։
Իմ ձեռօք եմ գործեալ ես զամենեսեան
Երբ խաշինք և գառինք իմ զինեւ իսայտան։

Ա՛ռ զամբիւղ, ա՛ռ զամբիւղ ևն։

Գանձք բազումք, ցաւք բազումք կան յայսմ աշխարհի,
Պէտք սակաւք, ցաւք սակաւք կան յիմում երկրի.

Այդի մի ունէի, զամրիւղ գործէի .
Լոկ կաթամբ և պտղով երջանիկ էի :
Ա՛ռ զամրիւղ, ա՛ռ զամրիւղ, ևն . :

Աստ սերկեւիլ, ծիրան և խաղող չիկայ,
Բայց միայն աղայ, բիւլ և քիլայ (1)
Ա՛խ, ե՞րբ իցէ արժանի եղեց վերըստին
Ճաշակել զպտուղս իմոյ պարտիզին :
Ա՛ռ զամրիւղ, ա՛ռ զամրիւղ ևն . :

Ահա դուք լաւ տիկնայք, զամրիւղս իմ առէ'ք,
Գիւղական աղջկանըս սիրով օգնեցէք,
Զի դարձեալ յերկիր իմ հանդերձ ձեր չնորհօք,
Զերախտիս ձեր առեալ՝ գովեցից բազմօք :
Ա՛ռ զամրիւղ, ա՛ռ զամրիւղ ևն . :

Մ. ԹԱՂԻԱՂԵԱՆՑ



ԳՈՂՅՆԻ ՔՆԱՐ

Sentences

Բէ հայ ըն-նայ պն սա - կա - դիր գողթ-նի ըլ - նարք
Աւ ակ եւ Աւ ակ եւ Օրկ նից թող գան ան - մաք Հա .

Դէ հայրենեաց պսակագիր,
Գողթնի քնարք լըռեր են .
Երկնից թող գան անմահ հոգիք,
Հայոց քաջեր պլակել :

(1) Պուլպէ Հնդկաց :

Մասեաց գագաթն թող գան բազմին .
Երկնից գունտ գունտ հրեշտակներ .
Աստուած իջեր ի Հայաստան ,
Հայոց արիւնն հոտոտել :

Փախէ'ք ամպեր Շաւարշանէն ,
Ալ մի՛ ցողէք ձեր ցողեր .
Շաւարշանը ոռոգուած է ,
Հայոց քաջաց արիւնէն :

Եւ կը ծին և կը ծնին ,
Աս դաշտին մէջ ոչ խոտ վարդ .
Այլ Վարդանայ ինկած երկիր ,
Պիտի ծաղկի սուրբ հաւատ :

Քանդակագործ քաջ Եղիշէն ,
Գրիչ ի ձեռն գայ յԱրտազ .
Զափէ, ձեւէ, գրէ, դրօշմէ ,
Կեանք, մահ, հաւատք Վարդանայ :

Ո՛հ Վարդանայ անուան արժան ,
Մասիս կանդնի մահարձան .
Մենաստաններ խաչն ի գմբէթ ,
Աւետարան սուրբ հաւատ :

Ծագէ արեւ քոյդ ճառագայթ
Խաղաղեաց լեռնէն, մութ խորշէն .
Այն տեղ ինկար քաջ Հմայեակ ,
Այն տեղ պառկեր նահաստակ :

Լուսին, լուսին, աչօքդ անքուն ,
Պահէ հայոց ոսկորներ .
Եւ Մայիսի զուարթ ցողով
Ցողէ անոնց շիրիմներ :

Արծուիք, բազէք Հայաստանի,
Եւ արագիլ ամրան հիւր,
Դուք հակեցէք այս աշխարհին,
Ժառանգեցէք հայոց տուն :

Մոխիներու վրայ նըստէք,
Աւերակներ շինէք բուն .
Եւ ծիծեռնակ գայ ու երթայ,
Մինչեւ Հայոց գայ գարուն :

Դ. Վ. ՄՐՈՒԱՆՉԵԱՆՅ

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՍԻՐՈՒԿՆ

Allegro moderato

Musical score for 'My Fatherland' in G major, 2/4 time. The vocal line consists of two staves of music with lyrics underneath. The lyrics are in Armenian.

Մեր հայրեն - իք սի - րուն իմը բեր պար - ըստ տուած նն քաջ .
Հը բա - յան նն - ըլ ու - մեր նին փամ - փոշունն ըլ ձախու աջ :

Մեր հայրենիքի սիրուն
Խմբեր պատրաստուած են քաջ ,
Հրացանները ուսերնին ,
Փամփուշտները ձախ ու աջ :

Հնազանդ կարգով շարուած ,
Իրենք առիւծի պէս քաջ .
Խմբագետը հրաման տուաւ
Գնալ դէպ յառաջ յառաջ :

Ուկեթել պաշլըգներով ,
Լազի շորեր թանկագին ,

Գնում էին դէպի Սասուն՝
Օգնելու Անդրանիկին :

Համիտիյէ զօրքերուն
Հրովարակ կարդացին ,
Թնդանօթներով զօրքերով
Դէպի Սասուն դիմեցին :

Խմբագետը նէվրուգն է .
Օգնականը՝ շատ քաջեր ,
Աղճոն առաջն էր ինկեր
Պատերազմի կ'սպասէր :

Հայ քաջերը դիրք մտան
Թշնամին պաշարեցին ,
Ամէն կողմէ և կրակ տուէ՛ք ,
Կոտորեցէ՛ք գոռացին :
Ահա եկաւ ձան ֆէտան
Սարսափ տիրեց բանակին ,
Փախչում էին դէպի լեռներ ,
Վախկոտ զօրքեր ահազին :

Խաւարից լոյս ծագեցաւ .
Սպասում են մեծ գործեր
Դաշնակցութեան ցանած սերմեր
Տալիս են նոր նոր յոյսեր :

ԱԲԳԵԶԷ

ԼԻԿՇԱՐԱՅ

ԵՐԳ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Allegro

S. ՔՈԽԱՏՅԱՆ

Ա - և ա քա - ժակ ու - րա . խու - թեան է սեր լս - միք
 մի - ու - թեան . ՚ի սեր լս - միք մի ու - թեան . մի վա - յ - լու
 որ - դիք հայ . կեան մեկ - տեղ ՚ըր . չուին օւ զն - ծան եւ զն - ծան :
 Կեց - ցե սեր եւ մի - ու - թեան կը բնէ մի սիրտ
 մի ա - րիւն . Կեց - ցե սեր եւ մի ու - թեան
 կը - բեք մի սիրտ մի ա - րիւն մի ս - րիւն .
 Կեր - ցուր աշ - քըդ յեր կնից կա - մար . Փայ - լի Շե - ռուն աստղ մի պայ - ձառ
 Օւ դու ո ՚այ զար . թիր փրտ առ ՚ա - յոյ օալ . դն
 աւ չէ խաւար Կեց - ցե սեր եւ մի ու - թեան
 կը - բեք մի սիրտ մի ա - րիւն . Կեց - ցե սեր եւ մի ու - թեան
 կը - բեք մի սիրտ մի ար - իւն կը - բեք մի սիրտ մի սիրտ մի ա
 րիւն . կը - բեք մի սիրտ մի սիրտ մի ա - րիւն .

Անա բաժակ ուրախութեան ,
 ի սէր յաւերգ միութեան ,
 Զի՞ վայելու որդիք Հայկեան ,
 Մէկտեղ հրճուին և ցնծան :
 Կեցցէ՛ սէր և միութիւն
 Կրեմք մի սիրտ մի արիւն :

Վերցո՞ւր աչքըդ յերկնից զամար ,
 Փայլի հեռուն աստղ մը պայծառ ,
 Եւ գու , ո՞ Հայ , զարթի՛ր սիրտ առ ,
 Հայոց բաղզը ա՛լ չէ խաւար :
 Կեցցէ՛ սէր և միութիւն
 Կրեմք մի սիրտ մի արիւն :

Բա՛ւ է այսչափ բաժանում ,
 Լլամք ուրախ և խնդում ,
 Նախանձ , վրէժ ձեզ թողում ,
 Անդռնդք և վիճք անհատնում :
 Կեցցէ՛ սէր և միութիւն
 Կրեմք մի սիրտ մի արիւն .

Փորձ մը ըրինք բաժանման ,
 Փորձ մ'ալ ընենք միութեան .
 Լեցուի փափաքդ Հայաստան ,
 Տե՛ս որդիք քո միանան :
 Կեցցէ՛ սէր և միութիւն
 Կրեմք մի սիրտ մի արիւն .

Ինչ և ընեմք ինչ կերպ առնեմք ,
 Ո՞վ չը գիտաց թէ մենք Հայ եմք ,
 Ո՞վ չի գիտեր թէ եղբայր եմք ,
 Արիք ծիծաղ դիմօք երգեմք :
 Կեցցէ՛ սէր և միութիւն
 Կրեմք մի սիրտ մի արիւն :



Ս Տ Փ Ա. Ն Պ Ե Ր Ճ Փ Ա. Փ Ա. Զ Ե Ա. Ն

Հայ պատուիրակ Պերլինի վեհաժողովին

1889—1888

Ո՞ր բռնաւոր ո՞ր օրէնքներ,
Կը պատուիրեն թէ մի՛ սիրեր,
Ազգիդ օգուտն ու բարիքներ,
Միրոյ գահն է յերկինս ի վեր:
Կեցցէ՛ սէր և միութիւն,
Կրեմք մի սիրտ մի արիւն:

Ս. Պ. ՓԱՓԱԶԵԱՆ

Խ Ա Խ Ա Բ Ե Լ Ե Մ Ի Ն Զ Պ Ե Ս Գ Ի Շ Ե Բ

Adagio

Խաւարել եմ ինչպէս գիշեր,
Խմ չորս կողմա է փոթորիկ.
Չունիմ ես սէր, չունիմ ես սէր,
Ես սիրում եմ իմ հայրենիք:

Խաւարել եմ ինչպէս գիշեր,
Խմ չորս կողմա է փոթորիկ.
Չունիմ ես սէր, չունիմ ես սէր,
Ես սիրում եմ իմ հայրենիք:

Այստեղ անթիւ անբաղդ մայրեր,
Որդեկորոյս ձնողներ.
Եղբայրազուրկ անթիւ քոյրեր,
Թափում են յորդ արցունքներ:

Ինձ մի սիրեր, ինձ մի սիրեր,
Ես շատ ու շատ փոխուել եմ.
Առ թաշկինակդ աչերդ սրբիր,
Ես քեզ սիրել կարող չեմ:

Մոսա բարեաւ իմ աչքի լոյս,
Սէրդ լինի ինձ խրախոյս,
Այդ արտասուքըն ես պիտ' թափեմ
Որ իմ ցաւերս սփոփեմ:

Ա՛խ, տուէ՛ք ինձ մի քաղցր քուն,
Կեսնքից հեռու ոլանամ.
Այն աշխարհը ուր ինդութիւն,
Ուր սէրն է միշտ անթառամ:

ՎԱՆԵՑԻ ՄՈՐ ԵՐԳԸ

Andante

Վրդտի տը - լայ չեմ ո - րո - րեր օ - րան քրդ որ քուն լաս ,
Հայ եղբար քը ... դուքի ե ... լա ն, մի նախ դռն ։ Ետ պիտիր նաս ։ նաս ։

Պըզափ՝ տըզայ , չեմ օրօրիր օրօրանքըդ , որ քուն լաս ,
Հայ աղբարքըդ ոտքի ելան . մինակ դո՞ւ ետ պիտ՝ մընաս .
Զարթէ՛ , հոգիս , անուշ գունէդ , թող աչերքդ լուս տեմնին ,
Արեւմուտքէն արեւ ծագեց , բաղդը բանեց Հայ ազգին :


Չար Սուլթանին ոսկի թախար ջարդուեցաւ , վար ինկաւ ,
Թախափի տակէն հաղար աղդաց ազատութիւն ծագեցաւ :
Ով որ շուտով ոտքի ելէ , աղատութիւն կը գտնէ ,
Սիրուն որդիս , միթէ մինակ չար լուծի տակ պիտ՝ մըանէ :

Մենք Սուլթանին շատ ինդրեցինք կողկողազին ու լացինք .
Աղի աղի արտասուքով ձեռք ու ոտքը լուտցինք ,
Բայց նա չանաց պաղատանքին ողորմելի հայերուն ,
Այժմ , նայինք , նա կը լսէ՝ շառաչիւնը սուրերուն :

Տուր , սիրական , քակեմ ձեռքիդ պալուլները , արձակեմ ,
Ու այդ թուլիկ աջիդ մէջը մի պողպատէ սուր գընեմ .
Բատրուկ գընա՛ արեան դաշտը , վերագարձի՛ր ազատուած ,
Արդեօք մի օր պիտի լըսե՞ս մեր ինդիրքը , ո՛վ Աստուած :

1877

ԳԱՐԱՐԱ-ԳԱՐԱՐԱ



ՔԱԶ ԱՆԴՐԱՆԻԿԻՆ

Ritmo di marcia

Գարեալ փայլնց Սասնոյ գլուխին ա - զա-տութեան իլ - դու - շակ ։
Անգ-ցէ չայ-րէ նիք գո-չն լով բարձրացուցին ա - լա - զակ ։

Դարցեալ փայլեց Սասնոյ գլխին

Ազատութեան Դրօշակ .

Կեցցէ՛ հայրենիք գոչելով ,

Բարձրացրին աղաղակ :

Թնդաց , որոսաց ձայներից

Ողջ աշխարհքը Հայկական ,

Խումբ-խումբ կարգած Հայ զաւակներ

Համնում էին օգնութեան :

Գուրգէն , Վահան , Հրայր (Դժոխք)

Բաջ Անդրանիկը զեկավար ,

Տալւորիկի լեռներում ,

Շրջում էին անդադար :

Սարսափեցան քիւրդ ցեղերը

Մինչ պալատը Սուլթանին ,

Հրամանեց շուտ կործանել

Դիրքերը հայդուկներին :

Ահա անգութ քիւրդ ու տաճիկ ,

Սարսափելի տեսարան ,

Ժամանակ է վրեժ լուծել ,

Գոչեց ձայնը Հայկական :

Կրակ տեղաց Հայ քաջերի ,

Բնակավայր դիրքերից ,

Այլայլեցան քիւրդ խուժաններ ,

Անելի գնդակներից :

ՄԵՆՔ ԱՆԿԵՂԾ ԶԻՆՈՒՈՐ ԵՆՔ

Strophes

Անք ան-կեղծի - նուոր ե նք ա-ռանցի վի - չակ Պարսկաստանի խոր -
իս-տնկ ենք նա - ռա . լե եր-կարծամա - նակ
թի զ ե - կել ե նա.մակ գը-նում ենք բա-րով կուշա-նանքտա-քով
ա-րիւն սուրու հուր պա-տե-րազ - մի դաշտ կ'ըս-պա-սէն մե - զի :

Մենք անկեղծ զինուոր ենք առանցի վիճակ .
Ուխտել ենք ծառայել երկար ժամանակ .
Պարսկաստանի խորքից եկել է նամակ ,
Դնում ենք բարով , կ'ուշանանք տարով ,
Արիւն , սուր ու հուր պատերազմի դաշտ կըսպասեն մեզի :

Դուշմանը մեզ տուեց «Ձան ֆիդայ» անուն ,
Այդ անուան համաձայն տեսաւ զօրութիւն .
Մենք չենք ուղեր ազատ կամաւ բռնութիւն ,
Ուխտել ենք կռուել , այդ սիրով մեռնել ,
Համոզուած ենք որ այդպիսով միայն կայ մեզ փրկութիւն :

Ստամբուլ պիտի լինի արեան ծով ,
Ամէն , կողմից կոխւ կըսկի շուտով .
Կոտորենք Բաշկալայ , անցնենք հեշտ կերպով ,
Աջից Վարդանը , ձախից Իշխանը .
Գրաւենք Աղբակ , տարածենք սարսափ , փա՛ռք Դաշնակցութեան

Բաշկալայ գաւառում , այն պատերազմին ,
Աւելի մեծ սարսափ տիրեց թշնամւոյն .
Քաջ Զէյթունը՝ յաղթեց վատ , չար գազանին ,
Կեցցէ՛ Զէյթունը , խրոխտ Սասունը ,
Կուսակցութիւնը . բաղդաւոր օրեր , պարծանք Հայերուն :

Ի ԶԷՆ

tempo di marcia

Ա. զա-տութեանց վառ սէ - րը թունդ ո - րո - տա ... զ իմ պը - ր - տում
իմ հայ-րեն-եաց սուրբա - նու . նը ինձ պա-տե-րազմ և կանչում և կանչում
ե - լէք , ե - լէք , հայ կա-զուկ ե - լէք , հայ-կայ զա - ւա - կու նք
ե - լէք , ե - լէք , հայ եղ-բայր - ներ Ա-ռէք ձեր սուրնու նի-զակու նի-զակու
Ազատութեան այն վառ սէրը
Թունդ որոտաց իմ սըրտում ,
իմ հայրենեաց սուրբ անունը
ինձ պատերազմ է կանչում :

Ելէ՛ք , ելէ՛ք , հայկազունք ,
Ելէ՛ք , Հայկայ զաւակունք ,
Ելէ՛ք , Ելէ՛ք , Հայ եղբարք
Առէ՛ք ձեր սուրն ու նիզակ :

Ահա՛ , եղբարք , Հայ եղբայրներ
Առէ՛ք զրահ , սուր , Պէնքեր ,
Մահը դաշտում Շաւարշանայ
Մեղ հրաւէր կը կարդայ :
Ելէ՛ք , ելէ՛ք , հայկազունք , ևն :

Ակն , հայրենիք , սուրբ անունըդ
Անշէջ վասի իմ սըրտում ,
Մեր Հայ եղբարց շիրիմները
Իրանց գիրկն են մեզ կանչում :
Ելէ՛ք , ելէ՛ք , հայկազունք , ևն :

Այս օրերը մեր քաջ կեանքին
Նուիրական թող լինին ,
Ո՞վ սիրում է Ազատութիւն
Թո՞ղ չմոռնայ Հայ անուն :
Ելէ՞ք, ելէ՞ք, հայկազունք, ևն :



Խ Ր Ա Տ

Ժամանակ

Սրբ-որ ազգին գնածք գե-լա-ւ... Սրբ-որ ազգին թագ փըլըն-զաւ
Յայն ժամ մո-ւ զատ կը դուրս մարտ ցի ։ Ի թենց թագեր ։

Երբոր ազգին գահը փլաւ,
Երբոր ազգին թագ փշրեցաւ,
Յայնժամ մոլի վատ կզերներ,
Բարձրացուցին իրենց թագեր :

Էսին Հայոց լոկ հայրենիք,
Է կղերին պաշտած երկինք .
Լաւ է կրօնի չհաւատալ,
Քանի թէ անոր գերի ըլլալ :

Հին բռնակալ թաղիդ փոխան ,
Հայ մարդ, ընտրէ դու քո իշխան .
Թանկ զարդն՝ պէտանքն գէշ կղերին,
Ա՛ռ, տուր, կրթէ հայի սրդին :

Ազգ մ'որ չունի ազատութիւն ,
Ան չունի կեանք, չունչ և արիւն .

Չունի կրօն, յոյս հոգեկան ,
Անրան նիւթէ է ուն կոխան ,
Երդմամբ վճռէ կամ մահ կեանք ,
Փշրէ, կոտրէ լուծ և կասկանք .
Լաւ է մարդուն բնաւ չապրի .
Քան թէ ասպրի այլոց գերի :

Փամիսուշտ, գնդակ, ոռւմբ, ուժանակ ,
Առատ լեցուր քո լայն տոպրակ .
Պատերազմի գաշտին մէջ գուն
Ընտրէ մեռնիլ քան թէ քո տուն :

Լաց, կոծ, բողոք, արիւն, աղօթք,
Անօգուտ են, կը ցնդին յօդ .
Քանդի աղգաց իրաւունքներ ,
Որոշած են քաջաց սուրեր :

Որու սուրը կտրուկ լինի ,
Որու գնդակն հեռու նետուի ,
Իրաւունքըն անոր կըլլայ ,
Աշխարհն այսպէս կը հաւատայ :

ՏԱՐՈՒՅՑԻ



ԽՈԽԵՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ
1874—1915



ԱՐՏԱՇԵՍ ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
1872—1915



ՀԱՅՐԻԿ ՃԱՆ

Solo
Օկել է զարուն սոխակը սի ըռուն սոխակը սի
- ըռուն վարդի թըփիտակ հայրիկճան երգէ հայը ըն նիք նիքն

Եկել է գարուն, սոխակը սիրուն,
Վարդի թըփի տակ, Հայրիկճան.

Երգէ՛ Հայրենիք :

Ծիծեռնակ, բաղէ, թըռչունք համօքն
Քաշում են միշտ, ախ, Հայրիկճան,
Օտարաց երկրն :

Կռունկ մեր պանդուխտ իւր բարձր դիրքով,
Փութայ ձայն տալ մեզ, Հայրիկճան,
Հայրենիաց սիրով :

Վասպուրականի երիտասարդներ,
Եւ օրիորդներ, Հայրիկճան,
Սեւեր են հագեր :

Պատանիք, մանկունք, Օրիորդք, կուսանք,
Հայրիկ կանչելով, հայրիկճան,
Քաշեն հառտչանք :

Մեր սիրտն ու հոգին քու հոգւոյդ դուրպան,
Հրեշտակ Հայ ազգի, Հայրիկճան,
Դարձի՛ր Հայաստան :

Մեր սիրտն ու հոգին դու մորմոքեցիր,
Քաղցր ու անուշիկ, Հայրիկճան,
Թողիր գնացիր :

Վռափորի ափեր, գիտեմ, չես սիրում,
Վարագոյ Վանքիդ, Հայրիկճան,
Կարօտ ես քաշում :

Հրաժարական քարոզըդ տուիր,
Խեղճուկ սրտերնուս, Հայրիկճան,
Կրակ վասեցիր :

Իսկ երկուշաբթին, որ օրն էր Աւագ,
Ի Սուրբ Յակոբէն, Հայրիկճան,
Դասուայիր արագ :

Ուր որ ալ լինիս, ուր որ ալ երթաս,
Քու փայլուն ջահէդ, Հայրիկճան,
Մեզի լոյս կուտաս :

Եւրոպ ձանաչէ քու բարձր արժանիք,
Մինչ քու կարօտովդ, Հայրիկճան,
Կայրինք տոշորինք :



ՇԱՐԺՈՒՄ ՀԱՅՐԵՆԵԱՑ ԿԱՐՆՈՅ

Sento

Զայն մը հընչեց եռ-զըրումի չա տո բնեն ըն ըն ըն
չա յո լեռ նե րէն Բոնդինսդէլսն չա յո սըրտեր
զե ն քի շա շի ն պէն զէ ն քի շա շի ն ն ն ն :

Չայնը հընչեց երդումի հայոց լեռներէն,
Թունդ թունդ ելան հայոց սրտեր զէնքի շաշիւնէն:
Հայ գիւղացին դարուց ի վեր սուր, զէնք չէր տեսած,
Դաշտը թողուց, սուր, հրացան բանի տեղ արած :

Հայ ծերուկը ցուան ի ձեռին լալով խնդրում է,
Հայրենիքի աղասութիւն տեսնել ու մեռնիլ :

Հայ տիկինը ստիպում է ամուսնոյն գնալ,
Պատերազմի դաշտի վրրայ վէրք տալ՝ ստանալ :

Քընքուշ կեանքը ծանր է թըւում Հայ օրիորդին,
Զէն ի ձերին սիրտ է տալիս հայոց քաջերին:

Երիտասարդք թոթով լեզուով նամակ ցրուել են,
Արարատայ դաշտին վրրայ զինուոր խըմքել են :

Ա՛լ բաւ լացիր, Մայր Հայաստան, երկիրըդ փառաց,
Քու զինուորներդ միշտ կտրիճ են, որչափ ալ քաղցած :

Ա՛ռ ու գգուէ՛ այդ քաջերը քու սըրտիդ վրրայ,
Որք կը թափեն իւրեանց արիւն սուրբ հողիդ վրրայ :

Անմիութիւն, տունը քանդով հայոց խեղճ ազգին,
Հրաժարեցաւ տեղի տուաւ միութեան ձայնին :


Լըսեց Քիւրան ու սառեցաւ արիւնը խեղճին,
Զէր երազել Հային տեսնել նա այդ վիճակին :

Եւրոպազմի լուրը հասաւ շարժման հայ գեղջկին,
Ուրախական ողջոյն տուաւ հայրենասիրին :

Ցընծա՛, մայր մեր, ո՞վ Հայաստան, որդիքդ միացան,
Ութը տարուան սուզ ու թափիծ քեզնից վերացան :

Ուսումն ու լոյսազատութիւն արդ քեզ են ընկեր,
Սուր, հրացան, եռանդ ուղմի պաշտպան անվեհեր :

Ուրախացաւ Մայր Հայաստան, ելաւ կանգնեցաւ,
Հինգ դարերի սուզ, սառապանք մի քիչ մեղմացաւ :



ՀԱՌՈՎԱՇԱՆԻՔ

ՍՈՐԳԻՍ ԶՈՆ ԿՈՒԿՈՒՆԵԱՆԻ

(Ախուրեալ ի Միզերիա)

Adagio

Երբ ա .. . լ .. . կոծ ձնո վառ վայ իմ մա-ռ
կոյ կը ս .. . խոր-տա-կուր քան փրփ-րա-դէ զ-
ա-ս հա-կոց մե ջն գեռ իմ յոց պա-քառ կոտ-բեր.

Երբ ալեկոծ ծովուն վրայ
իմ մակոյկս խորտակուի,
Ես փրփրադէզ ալեաց մէջք
Դեռ իմ յոյսըս չեմ կըարեր.

Բոլոր ուժովս եւ համարձակ
Բաղուկներըս կը չարժեմ,
Սլիքները պատառելով
Դէպի ափունք կը թւոչիմ :

Անհաւասար այս կոռին մէջ
Թէ ոյժերըս ինձ թողնեն,
Ալիքները յորձանք տալով
Դէպի անդունդ զիս մղեն :

Այն ժամանակ գէթ սփոփանք
Ես գլանում եմ նրան մէջ,
Որ մեռնում եմ քաշի նման
Կոփու տալով մինչեւ վերջ :

Ես կուկունեան Սարգիս անուն
Աքաորման մէջ ինկած եմ.
Ազատութեան սիրոյն համար
Կեանքս ու հոգիս զոհած եմ :

Ձեռքերս շղթայ, ոտքերըս շղթայ
Մութ բանտին մէջ ինկած եմ,
Հայրենիքի սիրոյն համար
Կեանքս ու հոգիս զոհած եմ:

Գերեզմանիս քարին վըրայ
Մէրըդ սիրով դու երգիր,
Եւ փոխանակ իմ երեսին
Ծիրմիս քարին համբուրի :

Մընաք բարեաւ, սուր, հըրացան,
Մընաք բարեաւ, ընկերներ,
Անցան օրերս ազատութեան,
Եկան բանտի շըլթաներ :

Գերեզմանիս չորս բոլորը,
Վարդ, մանիշակ թո'լ բուսնին,
Իմ հայրենսեաց իմ'զ զաւակունք,
Այս վարդերով զբօսնին :

ԵՐԳ ՄԵՌԱՆՈՂ ՀԱՅՐԵՆԱՍԵՐԻ

Soprano

Անդամնեւն կիր մեռա - նում եմ բայց հանգիստ եմ, ես հոգ - առ:
Իմ թռչուած միքս ես գրե - նում եմ որևէ նում եմ բեն Աս - տու - ծով:

Աղնիւ ընկեր, մեռանում եմ
Բայց հանգիստ եմ ես հոգով.
Եմ թշնամիքս ես օրհնում եմ,
Օրհնում եմ քեզ Աստուծով,

Հեռանում եմ, անգին ընկեր,
Ջըդնահատած ոչ ողից.
Բայց հաւաստեալ ահճնանուէր,
Ազգիս մըշակ կը հաշուիմ:

Աղնիւ ընկեր, չը մոռանաս,
Անդաւաճան, ջերմ սիրով
Ես սիրել եմ իմ Հայրենիք,—
Գլուխ եւ դուն նոյն շաւդով,

Խեղճութիւնը Հայոց ազգի՝
Կարեկցաբար մըտածի՛ր,
Ուկէ գրկոյկն եղիշէի
Քաջ առաջնորդ քեզ ընտրի՛ր:

Այնտեղ սուրբ կրօն, ազգ միաբան
Ազատ կամքով ու խիղճով.
Այնտեղ Վարդան, անմահ Վարդան,
Իւր խընկելի Քաջերով,

Հայրենիք՝ սեղան սըրբութեան—
Ես՝ Աստուծոյ առաջեւ
Շատ կ'աղաջեմ, շատ կ'արտասուեմ,
Որ ծագէ քեզ նոր արեւ:

Իմ մտերիմ, մահրս մօտ է.
Բայց հանգիստ եմ ես հոգով.
Որովհետեւ խիղճա արդար է,
Ճըժարտութեան ջամագով:
Ո. ՇԱՀԱԶԵԼԱԶՈՅ

Օ Պ Օ Պ

Andante

Ա - բի իմ սո - խա - կ թող պար - տեղմե - րին տա - լի - րով քուն թն - - ր
որ - ղուսա - չն - րին բայց նա լս - լիս ե - - - դու սո - խակ մի, դաւ -
իմ - որ - դին շու - զէ . տի - բա - զու դառ - նալ :

Արի՛, իմ սոխակ, թող պարտէզ մերին.
Տաղերով քուն բեր տըղիս աչերին.
Բայս նա լալիս է, դու, սոխակ մի գալ:
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ:

Ե՛կ, արեղածաղ, թո՞ղ արտ ու արօտ,
Օրօրէ՛ տըղիս, քընի է կարօտ.



Ա. Ա. Փ Ա. Շ Ե Լ Պ Ա. Տ Կ Ա. Ն Ե Ս Ա. Ն

Գ. Ա. Մ Ա. Բ Ի Բ. Ա. Թ Ի Պ Ա.

1830—1892

Բայց նա լալիս է . դու ձագուկ մի՛ գալ ,
իմ որդին չուզէ աբեղայ դառնալ :

Թո՛ղ դու , տատրակիկ , քու ձագն ու բունը ,
վուշոյով տըղիս բե՛ր անուշ քունը .

Բայց նա լալիս է , տատրակիկ մի՛ գալ ,
իմ որդին չուզէ սըգաւոր դառնալ ,

Կաչաղակ ճարպիկ , գող , արծաթասէր ,
Շահի զըրուցով որդուս քունը բեր .
Բայց նա լալիս է , կաչաղակ մի՛ գալ
իմ որդին չուզէ սովորաքար դառնալ :

Թո՛ղ որսօդ՝ արի՛ քաջասիրտ բազէ ,
Քու երգը գուցէ իմ որդին կ'ուզէ ...
Բազէն որ եկաւ , որդիս լընեցաւ ,
Ռազմի երգերի ձայնով քընեցաւ :

1881

ՀԱՅԱՍՏ-ԳԱԹԻՊԱ



ՍԱՍՈՒՆ

Lento

Սա - սուն գա - սա հին չա յաս-տան համ-բաւդ լը -
սն զ ալ - խար հա - մայն ն - րի - տա սարդ են
քա - քա - զուն հա - յո զ պար նանք մի - այ ն սա - սուն :

Սասուն գաւառ , հին Հայաստան .
Համբաւդ լսեց աշխարհ համայն ,
երիտասարդք են քաջազուն ,
Հայոց պարծանք միայն Սասուն :

Սասուն պարարտ հովիտներով ,
Պարծի ընդ միշտ իր քաջերով .

ՆԱԽԱՆՁ

Lento moderato

Գ. Գ. ԳՐԻԳՈՐ

Երբ կը տեսնեմ աշերուդ փայլ,
Երբ կը լըսեմ լեզուիդ դայլայլ,
Կ'ուզեմ աշխարհ ըլլայ խուլ, կոյր,
Որ ես միայն քեւ լըցուիմ, քոյր,

Երբ կը տեսնեմ ծոցիդ երեր
Երբ կը լըսեմ հոգւոյդ երգեր
Կ'ուզեմ դառնալ մարտիկ անյաղթ
Եւ ի բաց վանել պահպան հրեշտակդ:

Երբ կը տեսնեմ բիբերդ ի վեր,
Երբ կը լըսեմ իդձերդ առ տէր,
Կ'ուզեմ յարձան փոխուիս քոյր իմ:
Ես Աստուծոյ կը նախանձիմ:

1870

ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶ



ՈՂԲԵՐԳ

Andante

Հ. Մ. Շ. Ը. Յ. օր 14

Իր նեաց գի - չե - րն ան - ցաւ ու լոյսա րե ւոն ծագեց կար - միր
հա - յաս - տա - նի սա - րե - րուն դարձեալ մի - նակ զուրկիյ ըն - նաց
գըր կե - րեն հե - ծող բու - եր մի - այն ին - ծի ըն - կիր են ով դու
ան գութ սե նո ղեր սի - րն լի բըս ձն - զըդ ես թա - ղեր .

Դըմսեաց գիշերն անդաւ ու լոյս արեւուն
Ծագեց կարմիր Հայաստանի սարերուն . . .
Դարձեալ մինակ զուրկ սիրելեաց գրկերէն,
Հեծող բուեր միայն ինծի ընկեր են:
Ո՛ դո՛ւ, անգութ Սեւ Հողեր,
Սիրելիքս ծո՞ցդ ես թաղեր :

Զեփիւռներէն երջանիկ մի ինդրեմ լուր . . .
Այլ անոնք ալ սահին քովէս տիսուր՝ լուռ,
Ծաղկունք թոռմեր և լուեր է ալ սոխակ,
Մա՞ս կը հոտի մահ . . . Հայաստան աւերակ:
Ո՛ դո՛ւ, անգութ Սեւ Հողեր,
Սիրելիքս ծո՞ցդ ես թաղեր :
Երկի՞նք, գթա՛ յիս, տար զիս ի ծոց սիրելեաց
Եւ կամ ցցու՛ր իրենց դամբանն սրգակեաց,
Եւ թող հոն՝ հոն՝ ցամքին արցունքս ու արիւն,
Ո՞հ, հոն վերջ տամ կինացս սեւ օրերուն:
Ցցու՛ր, անգութ Սեւ հողեր,
իմ սիրելեաց դամբաններ :
(Սիհ ՀՈՂԵՐ)

Պետրոս Գուրեան

ՍԵՐԵՄՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Dodrals

Վերքե - րով լի ջանփիդայ եմ
Թափառական գուն չունեմ,
Եարիս փոխարէն զէնքս եմ գրկել,
Մի տեղ հանգիստ քուն չունեմ :

Վէրքերով լի ջանփիդայ եմ
Թափառական գուն չունեմ,
Եարիս փոխարէն զէնքս եմ գրկել,
Մի տեղ հանգիստ քուն չունեմ :

Արիւնոտ երկիր . սուգ ու շիւան ,
Ինձ գուրս կանչեց փակ կեանքից .
Տանջուած հայրենիքի սէրը
Զը վախեցուց ինձ վտանգից :

Ես կոչուեցայ ջանփիդայի ,
Դարձայ զինւոր դաղափարի .
Թող իմ թափած արեան շիթեր
Օրինակ դառնայ հայ զինւորի :

Մակեղոնիա իմ եղբայրս
Իմ խաչովս պըսակուեց ,
Եղբայրական պիրուն զէնքով
Գազան խուժանն խորտակուեց :

Ահա հանգիստ հող կը մտնեմ ,
Յոյսս գուք էք լոկերներ ,

Շարունակենք մեր սուրբ գործը
Դաշնակցութեան վեհ քաջեր :

Կախաղանից երբոր քամին
Ինձ տարբերեց ճօճալէն ,
Ցիշէք Պետրոս Սէրէմճեանին ,
Թշնամիէն վրէժ գոռալէն :

ԵՐԳ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Sento

Ես զատեն նստուածն այն օրից երբ հա - զե - զա -
ինձ նու լա - նու թի շառ տուածն կեն - դա - նու թիւ -
շուն - նշ վի - նւ սան - քարբառ մի մանուկ եր - կու ձեռ քըսպարզե - զի
պա - նու բա - զն թե - սե բու ա - զա - տու թիւն գը - կե - զի :

Ազատ Աստուածն այն օրից ,
Երբ համեցաւ շունչ փչել ,
Իմ հողանիւթ շինուածքին
Կենդանութիւն պարզեւել :

Ես անբարբառ մի մանուկ ,
Երկու ձեռքս պարզեցի ,
Եւ իմ անզօր թեւերով ,
Ազատութիւնն գրկեցի :

Մինչ գիշերը անհանդիսա ,
Օրորոցում կապկապած
Լալիս էի անդադար ,
Մօրս քունը խանգարած :

Խսդրում էի նրանից,
Բազուկներս արձակել,
Ես այն օրիս ուխտեցի.
Ազատութիւնը սիրել :

Թոթով լեզուիս մինչ կապերը,
Արձակուեցան բացուեցան,
Մինչ ծնողքը իմ ձայնից
Խնդացին ու բերկեցան :

Նախկին խօսքն որ ասացի,
Զէր հայր, կամ մայր, կամ այլ ինչ,
Ազատութիւն գուրս թռաւ,
Իմ մանկական բերանից :

«Ազատութիւն», ինձ կրկնեց,
Ճակատագիրը վերեւից,
«Ազատութեան» գու զիւուոր
Կամիս գրուիլ այս օրից :

«Ո՞հ, փշոտ է ճանապարհ,
Քեզ շատ փորձանք կը սպասէ,
Ազատութիւն սիրողին,
Այս աշխարհը խիստ նեղ էն :

—Ազատութիւն,—գոչեցի,
Թող որոտայ իմ գլխին.
Փայլակ, կայծակ, հուր երկաթ,
Թող դաւ դընէ թշնամին :

Ես մինչ ի մահ, կախաղան,
Մինչեւ անարդ մահու սիւն,
Պիտի գոռամ, պիտ՝ կրկնեմ,
Անդադար. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ :

Մ. ՆԱՐԱՆԴԵԱՆՅ

ԳԱՐՈՒՆ

(Չորրեսուն)

Անչառու ե ինչպէս զով Սոհաւուսուց կը չես ո՞վիկ
Սաղկանզը բայ գու բգուրալով եւ մազն ըուն կու պինխափկիկ
Բայց չես ո՞վիկ իմ հայ բենեաց գլ նա անզիր սը բաց
Բայց չես ո՞վիկ կիմ հայ բենեաց գլ նա անզիր սը բաց
Անչառու ե սըրտագին ծառաց մէջներ գուշնի կ Սիրոյ ժա
մերն ի յանտառին ըլքայլ զան ի բայ նիկ Բայց չես թըռչնիկ
իմ հայրենեաց գլ նա երգե սը բաց բայց չես թըռչնի կ
Հայրենեաց գլ նա երգե սը բաց բայց չես թըռչնի կ

Ո՞հ, ինչ անուշ և ինչպէս զով,
Առաւօտուց փըչես Հովիկ,
Ծաղկանց վըրայ գուրգուրալով,
Եւ մազերուն կուսին փափկիկ.
Բայց չես հովիկ իմ Հայրենեաց,
Գընա՛, անցի՛ր սըրտէս ի բաց :

Ո՞հ, ինչ աղու և սըրտագին,
Ծառոց մէջն երգես թըռչնիկ,

Սիրոյ ժամերն ի յանտառին,
Ըղմալեցան ի քո ձայնիկ.
Բայց չես թըռչնիկ իմ Հայրենեաց,
Գընա՛, երգէ՛ սըրտէս ի բաց:

Ո՞չ, ի՞նչ մրմունջ հանես վըտակ,
Ականակիտ և հանդարտիկ,
Քու հայելւոյդ մէջ անտակակ,
Նային զիրենք վարդն ու աղջիկ,
Բայց չես վըտակ իմ Հայրենեաց,
Գընա՛, հոսէ՛ սըրտէս ի բաց:

Թէպէտ թըռչնիկն ու հովն Հայոց,
Աւերակաց չըրջին վերայ,
Թէպէտ պըղտոր վըտակն Հայոց
Նոճիներու մէջ կը սողայ.
Նոքա՝ հատաչք են Հայրենեաց,
Նոքա չերթա՛ն սըրտէս ի բաց:
Մ. ՊէտիթՈւնիԱն.

ԵՐԱԿ

Andante

Եւ լւ - սե - զի մի ա - նուշ նայ ու հե - րա - զած
Տը ծօռ եր տը ծօռ եր այ լոյ նը ու րա - խու -
թեան բայց ափ սու - որ ե - րազ եր ե - րազ եր ։

Ես լըսեցի մի անուշ ձայն, —
Իմ ծերացած մօր մօտ էր,

Փալեց նըշոյլ ուրախութեան,
Բայց ափսնս որ երազ էր :
Կարկաչանս աղբիւր այն տեղ,
Թաւալում էր մարգարիտ,
Նա յըստակ էր որպէս բիւրեղ,
Այն երազ էր ցնորամիտ :
Եւ մեղեղին տխուր, մայրենի,
Յիշեց մանկութեան օրեր . —
Մօրս համբոյրն՝ ես զգացի, —
Այս, ափսնս որ երազ էր :
Կրծքին սեղմեց կարօտագին,
Աչքերս սըրբեց շատ թաց էր .
Բայց արտասուք զընում էին,
Այս, այդ ինչու երազ էր :

ՔԱՅԼԵՐԳ ԶԷՅԹՈՒՑՑԻՌՈՑ

Tempo di danza.

Աե - թուն - զի ենք մենք քայ ունիկ թըշ - նամի ե ֿ ն վը ունիկ
սուրթով զնի դա - կ եւ հը - րա - ցան մե - ր իւ - լա - ցէ ։ ուն
բաւ և ել - բար որշափ կը զինքն բութիւն թիւն մալ եւ - ննի
զոյց տանի ։ այ դառ նու ։ թիւ ։ ն դառ - նու ։ թիւ ։

Զէյթունցի՛ ենք, մենք քաջ ունինք
Թընամիէն վըրէժ ունինք,

Առւր թուր գընդակ և հըրացան
Մեր խաղալիքն է յաւիտեան :
Բաւ է եղբայր որչափ կրեցինք գերութիւն
Քիչ մ'ալ ենենք ցոյց տանք նրանց դառնութիւն :

Արեւ ծագեց Զէյթունցիներ
Դէն, ձի հեծնենք զէնքերն առնենք դիմենք յառաջ,
Ի՞նչու խեղճուկ գըլուխ ծըռած,
Բընաւորին մեր վիզ պարզած :
Բաւ է եղբայր ևն :

Ապրի՛ Զէյթուն, կեցցէ՛ Զէյթուն,
Թող չի տեսնէ սարկութիւն,
Քանի ունի մեզ պէս որդի
Ապրի՛ Զէյթուն, կեցցէ՛ Զէյթուն:
Բաւ է եղբայր ևն :



ԶԱՅՆ ՏՈՒՐ ՈՎ ՖԷՏԱ

Lento di marcia.

Զայն տուր ով ֆէտա ինչու ես տըրտում,
Լուռ ու մունջ նըստած երկար մտածում,
Աւա՛զ երկար մըտածում,
Տիսուր երկար մըտածում :

Շարժեցէ՛ք տղերք սըրեր շողշողուն,
Թափեցէ՛ք կրակ թըշնամեաց գըլխուն,
Գազան թըշնամեաց գըլխուն,
Դաժան թըշնամեաց գըլխուն :

Թափենք մեր արիւն իբրեւ ախոյեան,
Լինի առաջնորդ մեր աղատութեան,
Սիրուն մեր աղատութեան,
Անուշ մեր աղատութեան :

Շտապեցէ՛ք, լնկերք, խմբուիլ միատեղ,
Մետաքսէ գրօշակ ծածանի այնտեղ
Թող միշտ ծածանի այնտեղ .
Սիրուն ծածանի այնտեղ :

Պարզեցէ՛ք գրօշակ վեհ Դաշնակցութեան
Լինի առաջնորդ մեր աղատութեան
Սիրուն մեր աղատութեան,
Սիրուն մեր աղատութեան :

Քանի այսպէս է հայը խրդալի ,
Զինուած պիտ' լինի ամբողջ ֆէտայի .
Սիրուն ամբողջ ֆէտայի .
Կտրիճ ամբողջ ֆէտայի :

Մուին հըրացան ձեռքերնիս բըռնած ,
Թունաւոր փամփուշտ կուրծքերնիս շարած ,
Հապա կուրծքերնիս շարած ,
Սիրուն կուրծքերնիս շարած :



ԱՆՑՈՐԴԻՆ

Introduction andante

Ա. ՄԱՐՏԻՆՅԱՆ

Անցո՞րդ, սա գետին ջւրին մի՛ խըմեր,
Հօն զըլորեցին կարիճը գիւղին,
Դուցէ զով ջուրը շըրթունքները ջեր
Զովացնելու տեղ կ'այրէ տենդագին:

Բաւ է որչափ որ ուռենին՝ գետին
Վըրայ արտաստևեց ամէն օր անձայն,
Բաւ է որչափ որ մայրն՝ հարազատին
Համար փղձկեցաւ այնտեղ ողբածայն,

Դարձեալ այսքանն ալ չի կրցան երբէք
Մոռցընել սուգերն այս դաշտավայրին,
Անցո՞րդ, թոյլ տուր այդ ջուրին անաբեկ
Որ ժայռերու դէմ փշրի խոլագին:



ԼԵՒՈՆ ԿՍԱՀԱՆԵՍԸՆ

Բանասեղծ եւ գրադա

Ես իմ սափորըն այնաեղ փշրեցի
Որ չըլլայ սմագեմ անիծեալ ջուրէն,
Լերտն սիրահար հոգիս եղնիկի
Դ'ըմպէ կարիճին սիրած աղբիւրէն:
Լ. ԷՍԱՀԱՆԵՍԸՆ

Ա Ն Դ ՐԱ Ն Ի Կ Ի Ն

Andante

Եր - բե - ար - ծիւ սա - առ - նում ես լե - ռ ու ժա - յու
թըն - դա - զնում ես եր կինք եր - կի - ր տե - շա - վս - ս
քաշ - ա - նու - նրդ պի - տի յի - շու դա - ր դա - ր
հրա - կա լե - ռ ինչքնող ա պաս - տան Անդ - րա նի - կ ։

Երբեւ արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ .
Թնդացնում ես երկինք - գետին տենչավառ .
Սուրբ անուննդ պիտի յիշուի դարէ դար .
Հսկայ լերինք քեզ ապաստան Անդրանիկ :

Քիւրդ ու տաճիկ երբ լսեն քո անունը ,
Օձերի պէս պիտի սողան իրանց բունը .
Երակներիդ աղնիւ քաջի արիւնը
Չը ցամաքէ մինչ յաւիտեան Անդրանիկ :

Հայոց կուսանք , դափնեայ պըսակ թող հիւսեն ,
Քնքոյց ձեռամբ քո ճակատը պսակեն .
Գոհարներով անվախ կուրծքդ զարդարեն .
Կեցի՛ս յաւէտ դու անսասան Անդրանիկ :

Հայաստանի սոխակները քեզ համար ,
Թող դայլայլեն դիշեր - ցերեկ անդադար .
Անյաղթ մեսա դու քաջ կոռուի սիրահար ,
Հայրենիքի տէր ու պաշտպան Անդրանիկ ։



Ե Ղ Բ Ա Յ Բ Ե Մ Ք Մ Ե Ն Ք

Tempo di Marcia

Ե պիտ ձայ - նից ընութեան լը - քէ լ թէ երգի թընչին սի
րո - զա - բար Մատուկեկոսին ա - մե - նա գեղ թէ որ զար .
նեն փա - փուկ քը - նար ջու - նիւ ձայն մի այն քան սի -
րուն քան զանձկա - լի ե - ղ ըայր ա - նուն ջունին ձայն
մի այն քան սի - րուն քան զանձկա - լի ե - ղ ըայր ա - նուն ջուն
ինձ քու ձեռք եղ - բա - յը եղբայր եմք մեք որ մը - ըլլը -
կաւ է ի - նք է - ինք զատուա Բաղ - դին ա - մեն ա - մեն .
Ն ոխ չա - րա - նենք ի մի համ - բոյր զը - րոփ ն զըր ուին է ըաց ։

Ի բիւր ձայնից բնութեան շըքեղ՝
Թէ երգք թըռչին սիրողաբար ,
Մատունք կուսին ամենագեղ ,
Թէ որ զարնեն փափուկ քընար ,
Չընիմ ձայն մի այն քան սիրուն ,
Քան զանձկալի եղբայր անուն :

Տո՛ւր ինձ քու ձեռքդ, եղբայր եմք մենք
Որ մըրըրկաւ էինք զատուած.

Բաղդին ամէն ոխ չարանհնդ

Ի մի համբոյր ցըրուին ի բաց :

Բնդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն :

Երբ ալեւոր Մայրն Հայաստան,
Տեսնէ զօրդիս իւր քավէ քով.
Սըրտին խորունկ վէրքերն գաֆան,
Բաղցր արտասուաց բուժին ցօղով :

Բնդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն :

Մէկտեղ լացինք մենք ի հընում...
Եկէ՛ք դարձեալ յար անբաժան
Խառնենք զարտօսր և ըզիլնդում,
Որ բազմածնունդ ըլլայ մեր ջան :

Բնդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն :

Մէկտեղ յոդնինք, մէկտեղ ցանենք,
Մէկտեղ թափին մեր քրբախնքներ.
Հղունձ բարեաց յերկինս հանենք,
Որ կեանք առնուն Հայոց գաշտեր :

Բնդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն :

Մ. ՊէտեկթԱՌԵԱՆ

ԳԱՂՏՆԻՔՈՒ

Andantino

Dolce

Յ.ԱՐԱԿՈՆԵԱՆ

Ու թըռ-չու-նին և ու ու-կուն Սի-րեալ ըզ-բն-ց-ն և
կորուց ո դի ։ Խո - սու ը սա ինձ ծովն ան - հուն, ծո -
վուն ալ սիր-տըս չը ։ բա - ցի ։ Խո - սու ը սա ինձ
ծովն ան - հուն ծո - վուն ալ սիր-տըս չը ։ բա - ցի ։ Սա
դի - նե-րուն չը - սի ես քեզ Ասո-ղե ։ րուն ա - լ չը -
սի բը - նաւ ջը ։ սի լուս - նիւն թե այս հրա-կեզ Կը -
որ - ս մը սե-րդ ինչ - պէս ծը - նաւ ջը պէս ծը - նաւ Սա
կայն թըռ-չուն, աստ - ղերն աւ - մէն ։ հովն ու ծա - ղիկ, Ծովն
ու լու - ին, թեզ ճանչ - նաւ - լուս, առ - ջի է ա - մէն ջու -
վա - յո - քը ինձ կը ։ խո - սին, ֆէզ ճանչ - նաւ առ -
ջի մա - մէն հու վրա - յօ ։ քը ինձ ։ կը խո - սին ։

Ո՞չ թոշունին և ո՞չ հովուն
Սիրելս ըգքեղ չը զբուցեցի .
«Խօսէ» ըստ ինձ ծովն անհուն ,
Ծովուն ալ սիրտը չը բացի :

Տաղիկներուն չըսի ես քեզ ,
Աստղերուն ալ չըսի բլնաւ .
Չըսի լուսնին թէ այս հրակէզ
Սըրտիս մէջ սէրդ ինչպէս ծընաւ :

Սակայն թոչունն , աստղերն ամէն .
Հովն ու ծաղիկ , ծովն ու ըռւսին ,
Քեզ ճանչնալուս առջի ժամէն
Քու վըրայօքդ ինձ կը խօսին :

ԿԱՐԱՊԵՏ Ա. ՌՍԿԵԱՆ



ԵՎՀԻՍՈ. ՏԻՄԻՐՃԻՊԱՇԵՍՆ

Գրադետ—Յանասենդ
1851—1908

ԶՈՒԼՈՒՄ ԱՇԽԱՐՀ

(Andante)


Սի - րե - զի եա - բըս տա - րան եա - րաւ տո - ին ու տա - րան
ես ինչ զուլում աշ - խարէ - ե սըր - տա - կից ըն - կիր չը - կալ
զա - ըս խորն ե ժար չը - կայ տա - ր կայ ժա - րակ չը - կար չ

Սիրեցի եարս տարան
Եարս տուին ու տարան
Ես ինչ զուլում Աշխարհ է
Սիրտս բոկեցին ու տարան :

Յաւս մենձ է ճար չըկայ
Ճար կայ ճարակ չըկայ
Ես ինչ զուլում Աշխարհ է
Սըրտակից ընկեր չի կայ :

Մահերի վրով գնաց ,
Իմ եարը խռով գնաց
Ոչ լոր էր նա ոչ կաքաւ
Զեռիցս թռաւ գնաց :

Լաւ օրերս անցան գնացին
Սեւ տարտերս մնացին
Աս ինչ զուլում Աշխարհ է
Խոր ցաւերս մնացին :



ԽՈՐԷՆ ՆԱՐ-ՊԵՅ
ԲԱՆԱՍՏԵԴՅ-ԵՐԳԱՀԱՆ

1834—1892

ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ԿՈՌԻԵՆՔ

Մենք պետք է կը ունեք եւ ոչ լայջի նենք ևզ գի
կո րուս աը զէն քով յետ խը լենք նիս քանդարլա ցիկ
մկ է լը սո լը Մեզինչչահ բնց ար զուն քի ձո կը ֆ.

Մենք պէտք է կոռւենք և ոչ լաց լինենք,
Ազգի կորուսաը զէն քով յետ խը լենք,
Այսքան դար լացինք, ո՞վ է լըսողը,
Մեզ ի՞նչ չահ բերեց արցունքի ծովը:

Այլեւս չանք և ոչ լաց լինենք,
Կրակուած սրբառվ մեր գործը վարենք,
Անվեհեր քաջին այս է պատկանում,
Միշտ ազատ մեռնիլ կոռոի լայն դաշտում:

Մոլի և երկչուտ թրչնամին թող լայ.
Երբ հայ քաջի դէմ կոփւ դուրս կուգայ.
Մենք վախեցող չենք մահից տանջանքից,
Եւ ոչ ալ մահու դաժան գնդակից:

Անէծք այն հօրն, որ չի մղում որդուն,
Որ ազգի սիրուն նա թափէ արիւն.
Ամօթ, այն Հային և բիւր նախատինք,
Որ ազգի սիրուն չի գործում բարիք:



ՀԱԽԱՐԱԿ

Andante

Մանիր մանիր իմ ճա - խա - բակ լա նիրսիպատակ մալալ. ներ . Մանիր
թելե . ը հաստ ու բա - բակ . որ ես հո - գամ իմ զա - եր .

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
Մանիր սիպտակ մալանչներ
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ ցաւեր :
Զէթ եմ ածել ականջներըդ
Նոր շինել եմ շրտըւիկ :
Դեհ, շուտ շարժիր լայն թեւերըդ
Ոստեր շինիր սըրուլիկ :

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
Լիսեռնիկըդ պըտափիր,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Իլկիդ վըրայ փաթաթիր :
Տիգրանիկըս դուլպայ չունի ,
Հանդ է գնաւմ ոտաբայ ,
Գաբրէլըս չուխա չունի ,
Միշտ անում է սուգ ու լաց :

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
Մանիր սիպտակ փաթիլներ ,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ ցաւեր :
Ջըւալ չունինք , չաթու չունինք ,
Ոչ սամոտէն , ոչ պարան .

Մասպէս աղքամ գեռ եղած չենք ,
Պըտըրւել է ամէն բան :

Դեռ հարս էի որ գործեցի
Քանի կարպեա խալիչա ,
Բայց գըրանցից շուտ զըրկուեցի ,
Հիմա չունիմ մի քեչա :
Կարմիր օրըս երբ սեւացաւ
Եւ պարաք մընաց թէեւ քիչ ,
Պարտատիրոջ սիրան էլ սեւաւ .
Եկաւ տարաւ ամէն ինչ :

Մանիր , մանիր իմ ճախարակ ,
Մանիր սիպտակ քուլաներ ,
Մանիր թելեր հաստ ու բարակ ,
Որ ես հոգամ իմ ցաւեր :

Պ. ԱՂԱՑԵԱՆՑ



ՀՐԱՀԵՐ

Tempo d'andante

Տիգ ա - ռաւ - նին Նոյեան տա - պա - նին Յ - կած ու կանդամ ի սար Տաւ - րու - սին
Ա - և - տիս կու - տայ Տայ - կեան սե - րըն - դին Թէ ե - կաւ զա - րուն Բոյ գո - մաց զար - մին :

Տեսէ՛ր ազաւնին Նոյեան տապանին
Եկած ու կանգնած ի սար Տաւրոսին
Աւելիս կուտայ Հայկեան սերմեղին
Թէ եկաւ գարուն Թորգոմայ զարմին :

Արթնցէ՛ք Հայեր , քաջաց զաւակներ
Ասէք պիութեան տէգ ու նիզակներ ,

Շուտով կազմեցէք սիրոյ խմբակներ
Հագէ'ք քաջութեան դէն ու զրահներ
Հինգնարիւրամեաց մի քուն քնացանք
Զ'Աստուած ու զիզմայլ իսպառ մոռացանք,
Սիրոյ միութեան լաթեր մերկացանք
Ատելութեան ձեռք խաղալիք դարձանք:
Մոռացանք Հայրենիք, մոռացանք Հայաստան,
Կորուսինք մեր փառքն ու Արմենիստան,
Մաս մը Ռուսաստան մաս մը Պարսկաստան
Մնացինք, Հայեր, թշուառ, անողաշապան:
Երկինք բարկացաւ, Հայրենիք լացաւ
Մեր ջուրն ու հոգին մեզ արիւն դարձաւ,
Խաչեալըն Յիսուս մեզի մոռացաւ
Հայերուն բաժին մնաց սուգ ու ցաւ:
Այսչափ քնանալ մեզի հերիք է
Թմրիլն ու պառկիլ խիստ մեծ չարիք է
Սիրելն ու սիրուիլ արդէն բարիք է,
Հայու զինուորին համար պարտիք է:
Եկէ'ք միանանք բանանք դպրոցներ
Մեր մատաղ մանկունց համար վարժոցներ,
Վառենք, բորբոքենք սիրոյ հնոցներ,
Մեր սառած սրտին լլլան հալոցներ:
Շուքի պէս անցան այս հինգ մեծ դարեր
Լացին Հայրենեաց դաշտեր ու սարեր,
Հերիք ալ ձեզի, հերիք է վատեր
Հերի'ք մեր բաժին արցունք ու ահեր:

ԴԱՐԴԱ ԼԱՅԵՔ ՍԱՐԻ ՄՄԲՈՒՆ



Դարդս լացէ'ք, սարի սմբուլ,
Ալւան-ալւան ծաղիկներ,
Դարդս լացէ'ք բաղի բլբուլ
Ամպչող երկնից զով-հովեր:

Երկինք գետինք զլիսուս մթնան,
Անտուն, անտէր կուլամ ես.
Եարիս տարան, ջանիս տարան,
Հոնգուր հոնգուր կուլսմ ես:

Ախ, եարս ինձ հանեց սրտէն,
Ահճար թողեց ու գնաց...
Սրտիս սուգէն-խորունկ եարէն
Անտեղ թողեց ու գնաց:

Դարդս լացէ'ք, ևն, ևն, :
Ա. ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԿԻԼԻԿԻԱ

Երբ, որ քաց էիր զրադասերն յանձնոց է և հմբ գլու, ըն փախ
ապ ձը մեռն, Զաք նազ եր կիրօ մեր Ար մեջ նիոյ Երբ փայ է
իւր քաղցրիկ օրիր, Երբ որ ծի ծառն իր բոյն դառնայ,
ներ հազ նին տես բար որ ծառն իր բոյն դառնայ
ուն հազ նին տես բար օր ծառն իր բոյն դառնայ
իւր կամ տես բար օր ծառն իր բոյն դառնայ
ուն հազ նին տես բար օր ծառն իր բոյն դառնայ
լսարշն որ բնձ ե տուր ա բար օր ծառն ինձ ե տուր ա բար օր

- 87 -

Երբար բացուին գոներն յուսոց,
Եւ մեր երկրէն փախ տայ ձմեռ
Զքնալ երկնա մեր Սրմենիոց,
Երբ փայլէ իւր քաղցրիկ օդեր,
Երբար ծիծառն իր բոյն դառնայ,
Երբար ծառերն հազնին տերեւ,

Ցանկամ տեսնել զիմ կրկեկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ :

Տեսի դաշտերն Աւնուրիոց,
Լեռն Լիբանանն եւ իւր մայրեր,
Տեսի զերկինս Խալիոց,
Վենետիկ եւ իւր կոնտոլներ,
Կղզի նման չեք մեր կիսրեայ,
Եւ ոչ մէկ վայրն է արգարեւ

Ցանկամ տեսնել զիմ կրկեկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ :

Հասակ մը կայ մեր կենաց մէջ,
Ուր ամենայն իղձ կ'աւաբախ,
Հասակ մը ուր հէզին ի տենչ,
Յիշատակաց իւր կարօսի,
Յորժամ քնարս իմ ցրտանաց,
Սիրոյն ալով վերջին բարեւ,

Երթամ ննջեմ յիմ կրկեկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ :

Sf. ԱԱՀԱՊԵՏ ՌՈՒՍԻՆԵԱՆ



ԶԱՐՆԵՆՔ ԶԱՐԴԵՆՔ

Զարնենք զար-նենք ան-խնայ չո - պի : ա - րիւն .

չո - սե մերն մինչ ը - մայ Այժմ թշշ - նա մուն Կլուրիժ - ներ

քոյ- րեր կոյս կռիւն է մեր մի - ակ յոյս բաւ գե - րու - թիւն

**Զարնենք, զարնենք անխնայ
Հոսի արիւն .**

**Հոսեց մերն մինչ հիմայ ,
Արդ թշնամուն :**

**Կարիճներ , քոյրեր կոյս ,
Կոփւն է մեր միակ յոյս :**

Բաւ գերութիւն :

**Օրնեալ է մեր Աստուած ,
Կ'օրնէ մեր զէնք ,**

**Մեծ օրուանս այս հասած
Երջանիկ ենք :**

**Անխոտիր Զարդըւի՝
Զարդարարն երէկի ,
Վատոզին նենդ :**

**Մեր հողիք , ընկերներ ,
Զեզի զուրպան .**

**Զեզի հետ անվեհեր
Կոսւիլ կ'երթան .**

**Երբ հատնի մեր փառմիուշտ ,
Հատնի վատն արիւնուշտ ,
Գազան անկուշտ :**

Քահ , բլրիչ եւ արօր
Մընան անտէր .

Եղերք , եւ ո՛չ օրօր
Երգեն մայրեր .

Վատն անխիղճ շամաստակ՝

Կորչի անյիշատակ՝

Հապօն , քաջե՛ր :

Թող լսէ՛ մարդկութիւն
Լացէն մեր հետք

Մեր վերջին արութիւն .

Օ՛ն , Հայկայ ճետք :

Մարդ , երկինք են անհոդ .

Թշնամին՝ անողոք :

Զնջուի՛ իր հետք :

**Զարնենք , զարնենք են . ;
ԽՈՍՇՈՎ,**



ՄԵԼՔՈՆ ԿԻՒՐՃԵԱՆ (Հրանդ)

1855—1915

ՕՐՀՆԵԱԼ ՅԻՇՈՑԱԿ

Օրին նեալի - շա - տակն ա - նոնց որ մե .
ռա . ն սյլ թոլով ա - ռողի կանդ - նի հա - յան .
տան կա - յը տալ - թու - թեան թող մեծ օրն ըլ .
լայ սի - լէ - լու - իա . ա - լէ! - լու . . . իա .

Օրհնեալ յիշատակն անոնց որ մեռան .
Այլ թող ողջ առողջ կանգնի Հայաստան .
Վաղը յաղթութեան թող մեծ օրն ըլլայ ,
Ալէլուիա, ալէլուիա :

Ոսոխը, մարեց եղբարց մեր տրեւ .
Վայրապար յացինք խորանիդ առջեւ .
Բա՛ւ է, Տէր, փրկէ՛ մեր կեանք և՝ արտօրայ ,
Ալէլուիա, ալէլուիա :

Սուրբ, Տէր զօրութեանց, բնակեալդ ի յերկին .
Սիրէ մեր սիրալ, գործը մեր ձեռքին ,
Աջըդ պահապան լինի մեր վըրայ ,
Ալէլուիա, ալէլուիա :

Անապատին մէջ պահեցիր քառառունք ,
Թափեցիր մեզ պէս որիւն, արտասունք ,
Այլ պարտեցիր հուսկ գժոխմք, պատանայ ,
Ալէլուիա, ալէլուիա :

Դարձի բե՛ր, Աստուած, թշնամին մեր վատ
Թող չարիւնոտի մեր խոփն անորատ ,
Քրտամբ, ո՛չ արեամբ, երկիրս արբենայ ,
Ալէլուիա, ալէլուիա :

Իսկ թէ վերջապէս պիտի գայ կոիւ ,
Թող իմայ խուժանն ինչպէս չոր խոիւ ,
Հալածուած մշտին Հայ հանգստանայ ,
Ալէլուիա, ալէլուիա :

Սուրբ պատարագս բաց երկինքի տակ ,
Ընկա՛լ Տէ՛ր Աստուած, օրնէ՛ մեր վաստակ ,
Փրկէ՛ երկիր մեր, փրկէ աղգըս Հայ ,
Ալէլուիա, ալէլուիա :

Օրհնեա՛լ յիշատակն անոնց որ ինկան ,
Այլ վերականգնի փառօք՝ Հայաստան ,
Լուս, աւեր երկիրս՝ վաղը շէն կարգայ ,
Ալէլուիա, ալէլուիա :

ԽՈՇՐՈՎ



ԳԱՐԵԳԻՆ ՊԵՇԿԵՐԹԻՒԹԵԱՆ (Բանաստեղծ)

1867—1891

ՄԵՆԵՐԳ

Սաստիկ ցա... մը սիրոս զար - կեր կուլծ-քըս
 կը ... սե թէ պայ թի ինչ պիտ ըլ - լամ ինչ եմ
 ե ... շեր գը-լու - իլու ախ կը զըն ... դի

Սաստիկ ցաւ մը սիրոս է զարկեր
 կուրծքըս կ'ըսես կը պայթի
 ինչ պիտ' ըլլամ, ինչ եմ եղեր,
 Գլուխս, ախ կը ցնդի:

Եղրա՛րք, եկէ՛ք ձեռքի տանք,
 Տեսէ՛ք, մեր կրօնք մեր լեզուն
 կը գտնուին ի մեծ վտանդ.
 Ինչպէս եւ կեանքս աղաղուն.

Զեռք ձեռքի տանք եւ մեր անուն
 Հըպարտ դարուց քառասուն,
 Ժառանք թողունք մենք անարատ
 Մեր որդւոյցը հարազատ:

Անգութ երկինք քիչ մըն ալ դուն
 Շարժէ՛, փութա՛ օգնութեան,
 Կ'աղօթենք քեզ առառւ իրկուն
 Դուն կը խնդաս մեր վրան:

Մարիկ մարիկ սրտիս վրայ
 Վայ բացուեր է մեծ եարայ
 Արծուի աչքերս կուրցան լալով
 Մ'ն, խենթենամ պիտ' հիմայ:

«Մեսնի՛ կ'աւզեմ» ըսի երէկ
 Այսօր սակայն կը զդշոմ,
 Յաւերս հազար, փափաքս է մէկ
 — Սուրբ Հայրենիքս տեսնամ — :

Սաստիկ ցաւ մը սիրոս է պատեր
 Կուրծքըս կ'ըսես կը պայթի
 Ինչ պիտ' ըլլամ, ինչ եմ եղեր,
 Գլուխս, ախ կը ցնդի:

ԽՈՍՔԹՅ



Տիրոջու ԿԱՐՍՊԵՏ ՊԱՂՏԱՏԵԱՆ

1817—1903

ԿՈՉԱԿԻՆ ԶԱՅՆԸ

Violins. Violin 1 Octave. Violin 2 Octave.

Choir. Bassoon. Double Bass. Trombones.

Cantabile. Pianissimo. Sustained Notes. Sustained Notes.

Adagio. Allegro.

Allegro.

Musical score for orchestra and choir, featuring two staves of violin parts, a staff for bassoon, a staff for double bass, and two staves for brass instruments. The score includes dynamic markings like 'Pianissimo' and 'Sustained Notes', and tempo indications like 'Cantabile' and 'Allegro'.

Ժամ է Զարթօնքի • կոչսակը բարձրէն ուժգին կը հնչէ,
Նոր այդ կը ծագի, ինք լոյսը կանխած շարժումի մէջ է,
Օրը Հայունն է, Հայը ջանք մունի, գործել պէտք է շուտ,
Կոչսակը բարձրէն՝ արի՛ք կը հնչէ, Հայն ինչո՞ւ ննջէ:

Բարիք եւ կարիք, պարաք ու աշխատանք իր չորս սիւներն են՝
Արմաց սիացած բարձր ու համագիր վսեմ գագաթնէն՝
Կոչսակը անժանդ՝ անդուր կը հնչէ ձայնովը ոսկի՝
Արթնցէ՛ք հայե՛ր կարիքնիս մեծ է, առառ է արդէն:

Արթնցէ՛ք Հայե՛ր, հինգ գար խորունկ քուն միթէ չե՞ն բաւեր,
Եթէ գուք ննջէք, ո՞վ պիտի կանզնէ մեր աշխարհն աւեր՝
Ու սրբավայրեր, ո՞վ պիտի մեզմէ Հայ մօր խոր ցաւեր,
Ու պիտի բաւնայ վաս պառակտույն սերմանած դաւեր:

Ո՞վ պիտի հերկէ տարագիր Հայուն սրտի մութ խուեր,
Ու սերմ դնէ հոն պալարեկու Ազգին նոր լաւեր:
Ես միշտ կը ձայնեմ, ինծի լսեցին ձեր նախնի հաւեր,
Հանցէ՛ք և զաք՝ թէ կ'ուզէք շինել Հայուստանն աւեր:

ԳԱՀԱՐԱՄ ԽԱՉԻԿԵԱՆ



ԳՐԻԳՈՐ ԶՈՂԲԱՅԹ

ԳԱՂՅՐԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Եր - կիր մը կոյ ժե - ռա - ռոր տեղ
 Քաղցրա - նուն հա - - յսա - տան հո - ղը բեր - րի զու -
 րը մը ման Ան - ին եր ի - ր ու - տան
 Երկիր մը կայ հեռաւոր տեղ,
 Քաղցրանուն Հայաստան,
 Հողն է բերքի, ջուրն է համեղ,
 Անին է իր սստան,
 Թշնամին զայն արեամբ ներկեց
 Եւ դարձուց տերակ,
 Այն որ հողն իր երէկ հերկեց
 Արդ պառկի անոր տակ:
 Ամպեր կուլան կարմիր արցունք,
 Քանզի սուրբն Հայրենիք
 Ջաւակ չունի, չունի թոռունք
 Գէթ լալու իր կարիք:
 Դաւաճանեց Եւրոպն օտար,
 «Ժէօներ» մեզ խաբեցին,
 Նորադանդ Հայք կըլլան սատար
 Մեր հուսկ կործանումին:
 Անէծք կուտամ ճակատագրիս,
 Անէծք ցած թշնամուն.
 Կուլամ կ'ողբամ ինքիր դէմիս
 Նժդեհ եմ հէգ, անտուն:
 ԽՈՄՐՈՎ

ՀԱՅԿԱԿՆԵՐՈՒՆ ՈՐՈՌՈՎՆԵ

Larghetto

Եր նուած է ա ն նունեղ Յ ա - րիւ - նու ~
 ներ - կը - ած ։ Կ'եր զեւ բու - երն ի - ր ն քու . .
 Կ'որ բէ ... մը ըի - կը կա ... ա - զա կա ... զա ։

Յ. Սիմոնեան

Եխնուած է ան նունեղ
 Եւ արիւնով ներկըւած,
 Կ'երգեն բուերն իրեն քով.
 Կ'օրէ մըրրիկը կատղած,
 Կամարէն վար կը կախուին
 Կապոյտ կապոյտ ուլունքներ.
 Արցունքներն են երկընքին
 Խնկեր ցուրտէն հոն սառեր:
 Խոնաւութեան մէջ, մուրին,
 Որով խըրճիթն է լեցուն,
 Որով կը ճօճի օրոցքն հին,
 Հին վրէժին պէս իմ հոգւոյն:
 Անդունդ մէէ ան՝ ուր Հայն իր
 Վիշապներն հեստ կը ծընի,
 Ուր համբոյրներն, վարդերն հիր.
 Կը բուրեն հոտն արիւնի,

Ոչ մէկ գիրդ ծոց ծնողական
 Հոն կը բանայ իր երկինք,
 Խաւարներն հոն մայր կ'ըլլան,
 Եւ կայծակներն ալ՝ ըստինք:

Աւ ձիչերու մէջ լացի,
Տըժգոյն տըղան կը մեծնաց
Բարեկամի, դիպուածի
Զեռքերուն մէջ կը մեծնաց:

Եւ գուցէ վազն ան ըլլայ
Ռազմիկ մ'հրաշեաց, շանթող ամպ,
— Մեզ մսուրն Յիսուս մը կուտայ
Իսկ հայ օրոցքն՝ Ապլաստամբ



ԴԱՆԻԵԼ
1888

ՎԱՐՈՒԺԱՆ
1915

ՏԵՐ ՈՉ ՈՐՍԻԱ

ՀԵՂԻՆԱԿԵՑ
Ա-ՄԱՐՏԵՎԱՆ

Adagio

ՀՈՅ ԳԵՂՋՈՒԿ ԵՐԳԵՐ

ԱՆՁԿԱԾ $\text{d} = 88$

Ըրի՞առաւ, դաշնակից կը դոս վարդ-

Ախ, մարալ ջան, կոկոնըս թռոմած մընաց,
Զան, գեա՛րալ ջան, սիրտըս կըրտկած մընաց,
Ախ, մարալ ջան, ինչ անեմ իմ ապրելը,
Զան, գեարալ ջան, իմ աչքերը թաց մընաց:

Հաղար ու մի խաղ թ. 25.



ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒԻՔԸ

Ճիշտ ճառ չ չ ա վ հ է ա ։
 Ե ա զ յ ա ս լ ո ր գ ն ո ւ մ ե մ ,
 Հ ի ն հ ի ն գ ա ր ո ւ ց յ ի շ ա տ ա կ՝
 Ա լ ե ա ց մ է ջ ը պ ա ր ո ւ մ ե մ :

 Յ ա յ ա յ ա ր մ ի ա փ ե ր ո վ
 Ք ա յ լ ա մ ե լ ո ր գ ն ո ւ մ ե մ ,
 Հ ի ն հ ի ն գ ա ր ո ւ ց յ ի շ ա տ ա կ՝
 Ա լ ե ա ց մ է ջ ը պ ա ր ո ւ մ ե մ :

 Յ ա յ ա յ ա ր մ ի ա փ ե ր ո վ
 Ք ա յ լ ա մ ե լ ո ր գ ն ո ւ մ ե մ ,
 Հ ի ն հ ի ն գ ա ր ո ւ ց յ ի շ ա տ ա կ՝
 Ա լ ե ա ց մ է ջ ը պ ա ր ո ւ մ ե մ :

 Յ ա յ ա յ ա ր մ ի ա փ ե ր ո վ
 Ք ա յ լ ա մ ե լ ո ր գ ն ո ւ մ ե մ ,
 Հ ի ն հ ի ն գ ա ր ո ւ ց յ ի շ ա տ ա կ՝
 Ա լ ե ա ց մ է ջ ը պ ա ր ո ւ մ ե մ :

 Յ ա յ ա յ ա ր մ ի ա փ ե ր ո վ
 Ք ա յ լ ա մ ե լ ո ր գ ն ո ւ մ ե մ ,
 Հ ի ն հ ի ն գ ա ր ո ւ ց յ ի շ ա տ ա կ՝
 Ա լ ե ա ց մ է ջ ը պ ա ր ո ւ մ ե մ :

 Յ ա յ ա յ ա ր մ ի ա փ ե ր ո վ
 Ք ա յ լ ա մ ե լ ո ր գ ն ո ւ մ ե մ ,
 Հ ի ն հ ի ն գ ա ր ո ւ ց յ ի շ ա տ ա կ՝
 Ա լ ե ա ց մ է ջ ը պ ա ր ո ւ մ ե մ :

Մ ա յ լ Ա ր ա ք ս ի ա փ ե ր ո վ

Ք ա յ լ ա մ ե լ ո ր գ ն ո ւ մ ե մ ,
 Հ ի ն հ ի ն գ ա ր ո ւ ց յ ի շ ա տ ա կ՝
 Ա լ ե ա ց մ է ջ ը պ ա ր ո ւ մ ե մ :

Բ ա յ ց ն ո ք ա մ ի շ ա յ ե ղ ո ւ կ ր ,
 Պ ղ տ ո ր ջ ր ո վ ե ղ ե ր ք ի ն ,
 Դ ա ր ի ւ դ ա ր ի ւ խ փ ե լ ո վ ,
 Փ ա խ չ ո ւ մ է ի ն լ ա զ ի ն :

Ա ր ա ք ս , ի ն չ ո ւ ձ կ ա ն ց հ ե տ
 Պ ա ր չ ե ս բ ո ն ո ւ մ մ ա ն կ ա կ ա ն ,
 Դ ո ւ դ ե ո ւ ծ ո վ չ հ ա ս ա ծ ,
 Ս դ ա ւ ո ր ե ս ի ն ձ ն մ ա ն :

Ի ն չ ո ւ ա ր ց ո ւ ն ք ց ա յ ա ո ւ մ ե ն
 Ք ո ւ ս է զ պ ա ր տ ա չ ե ր ի ց ,
 Ի ն չ ո ւ ա ր ա գ փ ա խ չ ո ւ մ ե ն
 Ա յ դ հ ա ր ա զ ա տ ա փ ե ր ի ց :

Մ ի պ ղ տ ո ր ի լ յ ա տ ա կ լ ,
 Հ ա ն դ ա բ տ հ ո ս է խ ա յ տ ա լ ո վ .
 Մ ա ն կ ո ւ թ ի ւ ն ը ք ո կ ա ր ձ է ,
 Շ ո ւ տ կ ը հ ա ն ի ս դ է պ ի ծ ո վ :

Վ ա ր դ ի թ փ ե ր թ ո ՞ դ բ ո ւ մ ն ի ն
 Ք ո ւ ս հ ի ւ ր ը ն կ ա լ ա փ ի մ օ տ ,
 Ս ո խ ա կ ն ե ր ը ն ո ց ա մ է ջ
 Ե ր գ ե ն մ ի ն չ ե ւ ա ռ ա ւ օ տ :

Մ շ տ ա ղ ա լ ա ր ո ւ յ ի ն ե ր
 Ս ա ռ ծ ո ց ի մ է ջ ք ո ւ ջ ր ի ն ,
 Ձ կ ո ւ ն ո ս տ ն ո ւ տ ե ր ի ւ
 Թ ո ղ թ ա ց ա ն ե ն տ ա պ օ ր ի ն :

Ա փ ե ր ի գ մ օ տ ե ր գ ե լ ո ւ
 Հ ո վ ի ւ ք թ ո ղ գ ա ն հ ա մ ա ր ձ ա կ ,

«Դառն ու ուլը քու վճիտ
Զուրը մտնեն միշտ արձակ :

Մէջը ուռցուց Արաքսը ,
Փրփուր հանեց իւր տակից ,
Ամպի նման գոռալով
Էսպէս խօսեց յատակից :

«Եիզա՛խ , անմի՛տ պատանի ,
Նիրհս ինչ՞ւ դարեւոր
Վրդովում ես , նորոգում
Իմ ցաւերը բիւրաւոր :

«Սիրելիի մահից յետ
Ե՞րբ ես տեսել , որ այրին
Ոտից ցգլուխ պճնուի
Իւր զարդերով թանկազին :

Որ՞ի համար զարդարուիմ ,
Որ՞ի աչքը հրապուրեմ ,
Շատերն՝ ինձ են ատելի
Շատերին ես օտար եմ :

«Իմ ազգակից զիժ կուրը՝
Թէեւ այրի ինձ նման՝
Ստրկօրէն տանում է
Գայթակիչի կուռ շղթան :

«Կար ժամանակ , որ ես էլ ,
Ճքեղազարդ հարսի պէս ,
Հազար ու բիւր պչբանքով
Փախչում էի ափերէս :

«Յատակս պարզ ու վճիտ ,
Կոհակներո ոլորուն .
Լուսաբերը մինչեւ այդ
Ճրիս միջին էր լողում :

«Ի՞նչս մնաց այն օրիս ,
Ո՞ր ջրամօտ գեղերս ,
Ո՞ր իմ չէն քաղաքից ,
Ո՞ր բերկրալի տեղերս :

«Տուրքը ջրի ամէն օր՝
Իր սուրբ ծոցէն Արարատ
Մայրախնամ ինձ մնունդ
Պարգեւում է լիառատ :

«Բայց ես այն սուրբ ջրերով՝
Սուրբ-Ակոբի աղբիւրին
Պիտի զօղեմ արտօրացքն
Իմ ատելի օտարին :

«Կամ կենսատու իմ ջրով ,
Ավերիս մօտ կկած ,
Իւր նտոմա՞զը կատարէ
Թուրք կամ պարսիկը հոտած :

«Մինչ իմ որդիք — ո՛վ զիտէ —
Մարաւ , նօթի՛ , անտէրունչ՝
Օտար աշխարհ յածում են՝
Թոյլ ոտքերով , կիսաշունչ :

«Հեռո՛ւ , հեռո՞ւ քչեցին
Բնիկ ազգը իմ Հայկեան .
Նորա տեղը ինձ տուին
Ազգ անկրօն , մոլեկան :

«Դոցա՞ համար զարդարեմ
Իմ հիւրընկալ ափերը ,
Եւ կամ դոցա՞ հրապուրեմ
Ճպոստ պլշած աչերը :

«Քանի որ իմ զաւակունք
Այսպէս կու մնան պանդուխտ ,

ինձ միշտ սպառը կը տեսնէք .
Այս է անխար իմ սուրբ ուխտ :

Ել չխօսեց Արաքսը ,
Յորդանք տուեց ահագին ,
Օղակ օղակ օձի պէս
Սուաջ սողաց մոլեգին :

Ռ. Տ. Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

ՏԱՐԱԾԵԱԼ



Տարածեալ ձեռք ընդ ձեռաց ,
Ոտք ընդ ռտից ընթանալեաց .
Փայտ ընդ փայտի դառըն պըտղոյ
Կեանք ընդ մահու փոխարկելով ,

Ի մէջ երկուց անօրինաց
Կայր մերկացեալ տուողն օրինաց .
Զոր ոչ տեսին ազգքըն կուրաց՝
Բայց ի միոյն յաւազակաց :

Թոպէիցն արեգական
Էզտիւն արար գիշերանման ,
Զըստուելըն քող արկ մերկութեան ,
Զի մի տեսցէ ակն անարժան ,
Ի մէջօրեայն նըսեմացաւ
Յորժամ Աղամ մեղօք մեռաւ ,
Ի յիններորդն ի լոյս դարձաւ
Յորժամ մահուամբ մահըն լուծաւ :

Յօղէր արտօսըր ցաւաղին ,
Մայր Տեառն որ կայր մերձ առ խաչին ,
Յորժամ լրսէր ըզծ արաւին
Բարբառելոյ իւր միածնին .
Ետուն քացախ խառնեալ լեղի
Այսմ որ բղխեաց գետ յաղենի .
Եւ ի վիմէն վըտակ բարի
Արբոյց տոհմին դառնացողի :

Իվւծեալ յերրորդ ժամու օձին ,
Զմիաըս նախնոյ մօրն Եւային .
Ի վեցն անկեալ մարդն առաջին
Հաւանական բանիւ նորին ,
Ի սոյն ժամու Տէրն ի խաչին ,
Զի քաւեսցէ զմեղըս նոցին ,
Եւ յորժամ ել Աղամըն հին
Եղ զաւազակն ի մէջ դրախտին :

Փարելի բարբառ ընդ իմ .
Էլի էլի առ հայր դոչէր ,
Զնողին կամաւ հօր աւանդէր .
Զնողիս մարդկան նոյն ընծայէր ,

Երկիր հիմամբք սասանեցաւ
Եւ վարագոյրըն ընդ մէջ հերձաւ,
Վէմք ի յինքեանց պատառեցան
Եւ գերեզմանք մահու բացան :

Քարոզի ի սքանչելեաց,
Աստուած մարմնով վասն իմ խաչեալ,
Մերով բնութեամբըս մեռանի,
Աստուած անմահ խոստովանի,
Կրկնավըտակ կողին աղբերբք
Եկեղեցի իւր հաստատի,
Զբոլըն մաքրի զարիւնն ըմպէ,
ԶՈՐԴԻ ԸՆԴ հօր փառաւորէ :

Շաբական



ԿՈՄԻՏԱՍՈ ՎԱՐԴԱՊԵՏ



Խօս Աշխան Աշխան

Introduction

ՀԵՐՈՍ ԵԳՐԵՄԻ ՀՈՉԱԿՈՅՏԻՒ
Եղանակ Մ. Գ. Ճերրաչեան.

Tempo di marcia

Սա թէ րու ծը նոնդ ար ծի յազմա կանց գու հայ առու նինայն որի գէ րա զանց

րու նու թիւն նու րու էր զօ ր ու ույսու եան

ով ա ն ման օվ թիւն նու ցից ցի ա յան յու եան

օվուն պատ թիւն տէ պատ. օվ թիւն յան նու գահրա ման

չարի սը չուրի օէ թիւ. ի ուսն եան չարի սի չուրի եէ թիւ. ի ուսն եան :

Սարերու ծնունդ արծիւ յաղթապանծ .

Դուն Հայ անունին պատիւ գերազանց ,

Բանութիւններու հզօր ախոյեան ,

Ո՛վ անվահ ԵՓՐԵՄ , կեցցե՞ս յաւիտեան :

*Զինտէ պա՛տ Եփրեմ խանը գահրաման

Հարի՛սը հուրիհ' էթը իրանեան :

*Թարզմն . — Ապրի՛ ներոս Եփրեմ խան,
Մշակ իրանի ազատութան :

Կուկունեան իսումբով անցաւ Հայաստան :
Կոռուեցաւ քաջ քաջ, մտաւ մութ զընտան,
Փշրեց խորտակեց ժանդոս շղթաներ,
Եղաւ սուրբ գատին անձնըւէր ընկեր :
Զինտէ պա՛տ Եփրեմ խանը գահրաման
Հարի՛սը հիւրիե՛էթը Իրանեան :

Դարձուց աչքերը՝ Արեւի երկիր,
Տեսաւ Պարսկաստանն անբաղդ վշտակիր,
Պարսիկ քաղաքներ մշուշով պատած,
Իրանի զաւակ թափէր արցունք լաց :
Զինտէ պա՛տ Եփրեմ խանը գահրաման
Հարի՛սը հիւրիե՛էթը Իրանեան :

Այդ ողբ ու կոծէն յուզուեցաւ մեր քաջ,
Հմբոստ ու խրոխաւ պայցաւ յառաջ,
Զէնքերը ձեռքը իջաւ ասպարէջ,
Յաղթութեան փողը հնջեցուց Արէս :
Զինտէ պա՛տ Եփրեմ խանը գահրաման
Հարի՛սը հիւրիե՛էթը Իրանեան :

Ամուր ինչպէս ժայռ, որուն դէմ ի զուր
Կուգան կը բաղխին ալիք ու փրփուր,
Պատոյ դաշտին մէջ կանգուն մնաց Ան,
Եւ արհամարեց հարուտներ մահուան :
Զինտէ պատ Եփրեմ խանը գահրաման
Հարի՛սը հուրիե՛էթը Իրանեան :

Նենդ, դաւ, բռնութիւն, դժոխքի տարրեր
Ման կըսպառնային քաջին անլեհեր,
Գոռաց ա՛ն, ինչպէս մրրիկ ուժգին,
Արձագանք տըւին երկիր ու երկին :
Զինտէ պա՛տ Եփրեմ խանը գահրաման
Հարի՛սը հուրիե՛էթը Իրանեան :

Քէ՛զ վասոք հիացում, ո՛վ Սիւնեաց աշխարհ,
Որ այսպէս վսեծ Հերոս մը ծընար,
Բու մնմահութեանդ բոլորեց դափնի ,
Սարսափ տարածեց իրեւ ՖէՏՍՅՅի :
Զինտէ պա՛տ Եփրեմ գահրաման
Հարի՛սը հուրիե՛էթը Իրանեան :

Մեռնիլ ո՛հ, մեռնիլ, երազն էր Անոր
Կուոյ դաշտին մէջ իրեւ քաջ զինւոր :
Խնք աղատութեան զուարթ հըրեշտակ
Պոցեց աչքերը, գնդակներու տակ :
Զինտէ պա՛տ Եփրեմ խանը գահրաման
Հարի՛սը հուրիե՛էթը Իրանեան :

Քեզ, Պաշնակցութիւն, հազ ար երանի ,
Որ կըրեց քու մէջ Եփրեմներ արի ,
Անոր փառքերէն գինովցիր և դուն ,
Ալարէ գործդ յառաջ թափով եռանդուն :
Զինտէ պա՛տ Եփրեմ խանը գահրաման
Հարի՛սը հուրիե՛էթը Իրանեան :


Համբո՛յր գրոշիդ, վէ՞հ նշանաբան ,
Որուն տակ ծընան Հերոններ այնքան ,
Ցիշեմ Սամաթիոց հերոս Գլուխնին ,
ԱՆԴՐԵԼԱՍԵԱՆԻ , ասոնք ման չունին :
Զինտէ պա՛տ Եփրեմ խանը գահրաման
Հարի՛սը հուրիե՛էթը Իրանեան :

Եղիսպէս ՄիԱԱթեԱնն, ՄԱՆԱԻԵԱՆԻն, հետ
Ոյց Ընկերակից բերկեցայ յաւէտ ,
Իցիւ, ես նախակին կորովով աշխոյժ ,
Անենայի միշտ քաջութիւն եւ ոյժ :
Զինտէ պա՛տ Եփրեմ խանը գահրաման
Հարի՛սը հուրիե՛էթը Իրանեան :

Այժմ իրանեանց հետ կսկծալի,
Թափելով սրտանց արցունքներ աղի,
Կըսեմ, մահդ, Եփրեմ, մխեց մեզ սուր փուշ՝
Երանութեան մէջ հանգչէ, քունդ անուշ։
Զինտէ պա՛տ Եփրեմ խանը Գահրամա՛ն
Հարի՛սը հուրի՛էթը Իրանեան։

ՄԻՀՐԱՆ ԱՇՃԵԱՆ

ԱՌԱԻՕՏ ԼՈՒՍՈՅ



Առաւօտ լուսոյ,
Արեգակն արդար .
Առ իս լոյս ծագեա՛:
Բզիսումն 'ի Հօրէ,
Բզիս' ա 'ի հոգւոյս,
Բան քեզ 'ի հաճոյս :
Գանձդ ողորմութեան ,
Գանձիդ ծածկելոյ
Գըտող զիս արա՛:
Դուռն ողորմութեան ,
Գանձիդ հոգինա ,
Գանձիդ գոտինա :

Երբեակ միութիւն ,
Եղելոց խնամող ,
Եւ ինձ ողորմեա՛:
Զարթի՛ր, Տէր, յօդնել ,
Զարթո՛ն զթմրեալս ,
Զուարթնոց նմանիլ ,
Էդ Հայր անսկիզբն ,
Էակից Որդի
Էմիշտ Սուրբ Հոգի :
Էնկա՛ զիս, զթած ,
Էնկա՛ ողորմած ,
Էնկա՛ մարդամէր :

Թագաւոր փառաց ,
Թողութեանց տուող ,
Թո՞զ ինձ ըզանցանս :
Ժողովո՛ղ բարեաց ,
Ժողովեա՛ և զիս ,
Ժողովս անդրանկա՛ց :
'Ի քէն, Տէր, հայցեմ ,
'Ի մարդասիրէդ ,
Ինձ բժշկութիւն :
Լե՛ր կեանք մեռելոյս ,
Լոյս խաւարելոյս ,
Լուծանող ցաւոյս :
Խորհրդոց զիտող ,
Խաւարիս չնորհեա՛ ,
Խորհուրդ լուսաւոր :
Ծնունդ Հօր ծոցոյ ,
Ծածկելոյս ստուերաւ ,
Ծագեա՛ լոյս փառաց :
Կենարար Փրկիչ ,
Կեցն զմեռեալս ,
Կանզնեա՛ զգլորեալս ,
Հաստեա՛ հաւատով ,
Հաստատեա՛ յուսով ,
Հիմնեցն սիրով :
Զայնիւս աղաջեմ ,
Զեռօքս պաղատիմ .
Զիր բարեաց չնորհեա՛ :
Զամբարամբ լուսոյ ,
Զեկավար ճարտար ,
Զօղեալս ամրացն :
Ճառագայթ փառաց ,
Ճանապարհ ինձ ցոյց ,
Ճեպել 'ի յերկինս :


Միածինդ Հօր ,
Մո՛յծ զիս յառագաստ ,
Մաքուր հարսանիացդ :
Ցորժամ գաս փառօք ,
Յահագին աւուրին ,
Ցիշեա՛ զիս, Քրիստոս :
Նորոգող հնութեանց ,
Նորոգեա՛ և զիս :
Նորոգ զարդարեա՛ :
Ծնորհատու բարեաց ,
Ծնորհեա՛ զքաւութիւն ,
Ծնորհեա՛ զթողութիւն :
Ուրախացն , Տէր ,
Ուզոյս փրկութեամբ ,
Ոյր վասն եմ 'ի սուզ :
Զար մշակողին ,
Զար սերմանց նորին
Զորացն զպտուղն :
Պարգեւիչ բարեաց ,
Պարգեւեա՛ իմոց
Պարտեացս թողութիւն :
Զուր չնորհեա՛ աչացս ,
Զերմ հեղուլ արտօսը ,
Զնջել զյանցանս :
Ռետինդ քաղցու ,
Ռամ հոգւոյս արբո՛ ,
Ռահ ցոյց ինձ լուսոյ :
Սէր անուն Ցիսուս ,
Սիրով քով ճմլեա՛ ,
Սիրտ իմ քարեղէն :
Վասն զթութեան ,
Վասն ողորմութեան ,
Վերստին կեցն :

Լացէք ողբացէք՝ ձայնիւ միտամն
 Սըգալի Մարիամա՝ այժմ անօդնական
 Կարօտով իմ որդեռոյ՝ կամ ի յերերման։
 Զօրութիւնք հզօրք՝ հրեշտակք երկնային։
 Պետք և տէրութիւնք՝ և զօրք վեր նային։
 Տեսէ՛ք զիմ որդին՝ զիսաչեալն ի փայտին։
 Լացէք ողբացէք՝ ձայնիւ ևլն։
 Ո՛վ թըրոչունք երկնից՝ և ձրկունք ծովու,
 Լուսին՝ ւարեգակն՝ աստղ առաւօտու
 Ահա՛ մըթացաւ՝ օրն իմ լուսատու։
 Լացէք ողբացէք՝ ձայնիւ ևլն։
 Մայրք Լիբանանու՝ և ծառք անտառաց,
 Նըռնենինք այգաց՝ և տունկք պարտիզաց։
 Ծովք և գետք ամէն՝ և ջուրք աղբերաց։
 Լացէք ողբացէք ձայնիւ ևլն։
 Ո՛վ դուք մեղաւորք՝ որդիք Աղամայ,
 Վասըն ձեր խաչի՝ որդիս Մարիամայ,
 Զի բայցէ զիսակեալ՝ ըզդուռն եղեմայ։
 Լացէք ողբացէք ձայնիւ ևլն։
 Նորածին մանկունք՝ Սուրբ աւազանին
 Գեղարդեամք խոցի՝ որդեակս ի խաչին,
 Զուր առաս բաղխէ՛ ծննդեան ձեզ կրկն։
 Լացէք ողբացէք՝ ձայնիւ ևլն։
 Ո՛վ սուրբ քահանայք՝ պաշտօնեայք լուսոյ
 Զմաննայ ձեղ բաշխէ՛ ի բացեալ կողոյ։
 Զմարմին և զարիւն՝ սուրբ ուխտի նորոյ։
 Լացէք ողբացէք ձայնիւ ևլն։
 Կանայք պատուկանք՝ դըստերք Եւայի,
 Որք գիտէք ըզդութ՝ ծընողաց սըրտի։
 Հոգիս մորմոքի՝ սիրտըս տոչորի։
 Լացէք ողբացէք ձայնիւ ևլն։

Ո՛վ Սուրբ Սիմէօն՝ զովեալ ծերունի
 Այսօր ոօթալից՝ բան քո կատարի,
 Արդ էանց յանձն իմ՝ սուր նենդաւորի։
 Լացէք ողբացէք ձայնիւ ևլն։
 Ո՛վ Հայր երկնաւոր՝ խընդրեմ ես ի քէն
 Հոգիդ Սուրբ ընկալ՝ զաղաչանս յինէն։
 Տուր ինձ արտասուս՝ ծովու ջուրն ամէն։
 Լացից ողբացից՝ զվշտացեալ անձն իմ. ևլն։
 Ո՛վ Սուրբ Յովհաննէս՝ Որդւոյս սիրելի.
 Եւ Սուրբ Մարիամ՝ Մադգաղենացի։
 Ողբակից յերուաք՝ մօրլս Յիսուսի։
 Լացէք ողբացէք ձայնիւ ևլն.
 Խոր կրակից մահու՝ իբր ալեաց ծովու,
 Առ իս խաղացին՝ սաստկագին հովու
 Թոռան և գոչեն՝ որպէս առիւծու։
 Լացէք ողբացէք ձայնիւ ևլն.
 Ի Սուրբ Բեթէնեմ՝ անբանից յացին,
 Բզփատք՝ ի բարձունս՝ հրեշտակք երգէին,
 Սրդ բարձաւ այսօր՝ փառքս ամենեւին։
 Լացէք ողբացէք ձայնիւ ևլն.
 Լալով ողբալով՝ սիրտս ո՛չ հանդարտի,
 Խոցոտեալ հոգիս՝ ո՛չ մըխիթարի։
 Այսօր ցման ինդրեմ՝ ի ձեռս չանկանի։
 Լացէ՛ք ողբացէք ձայնիւ ևլն.
 Ո՛վ իմ փարելի՝ որդեակ սիրելի
 Մի թողուր այսպէս՝ զմայր քո խըզճալի.
 Էնդ քեզ մեռանիլս՝ է ինձ երանի։
 Լացէք ողբացէք ձայնիւ ևլն.

ՊԵՏՐՈՍ Վ.ՐԴ. ՂԱՓԱՆՅՑԻ

Է ԶՍԻԱԾԻՆ



Էշմիածինն ի հօրէ և լոյս փառաց ընդ նմա.
Զայնք հնչեցին սանդարամետք անդընդոց :
Տեսեալ զլոյս մեծ Հայրապետին Գրիգորի .
Պատմէր ցընծութեամբ հաւատացեալ արքային
Եկայք շինեցուք Սուրբ ըվխորանըն լուսոյ ,
Քանզի իսմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի :

ՇԱՐԱԿԱՆ

ՍՈՒՐԲ ՕՃԱԽ

Adagio

Ս. ՄՄՐԼԵՍՆ.



Մեր պապերն եղջիւր տռ եղջիւր դինի
Խըմեցին նըռան ,
Գինիդ արիւնի փոխեց թըռնամին
Ով վկայարան :

Աստղերդ որ մեռան՝ լոյսեր թողուցին
Կըտուրիդ վլրայ ,
Այզիներուդ մէջ մէն մի բարունակ
Սըրինդ թո՛ղ ըլլայ :

Գարնան օր մըն էր որ անցար սուրէն
Մե՛ծ հերոսատուն ,
Վերաստուացա՛ծ՝ զերդ խորան խնկօն՝
Կանզնէ սրբատուն :

Գերհանձար կապոյտն անման գաւառին
Հոգիդ թող լըւայ ,

— 118 —

Հարսկըդ սափոր տո սափոր ջուրեր
Թափեն շէմքիդ վրայ :

Մայրեր թող ծընին խորաններուդ տակ
Թուներ Մըների .

Հայ առագաստին որբութեան վլրայ
Դըրօ՛չը փալի :

Օձախ , տաճարին քովիկը ըլլաս ,
Խաչը սուրին հետ ,

Սրքեմին խունկը պապերու որբաժին
Մէջ վառի յաւէտ :

Եոր Իորայէլի ծաղկեալ Գողգոթայ ,
Երդումի երդիք ,

Հերիք կտրիճը ժայռն ի վեր մագլեց ,
Բա՛ց դիրկդ անդորրիկ :

Ա՛լ խապիհկ մ'ուզեր մեր կըռռունկներէն ,
Կըտուրիդ վրայ

Ծիծեռնակները նոր բոյն բունեցին
Մարագէդ հիմայ :

Կ'աճին թեւերուդ տակ դրախտաբոյսեր ,
Ուր կը սընանին

Որդան կարմիրներ որ գոյնը իրենց
Տան եռագոյնին :

Թոռներուդ թըւավ վառէ ճըրագներ ,
Ծուխով ծըխանիդ

Խորան առ խորան , խարոյկ առ խարոյկ
Մըխա՛երկնքիդ :

Լուսնկադ կալ է կապեր , կը թափէ
Միւռոն արտերուդ ,

Հարսնացեա՞լ օձախ , պլսակ կը կապեն
Աստղերը գըլխուդ :

Դեռ աշտարակուող դարե՛րու ոգին ,
Տո՛ւն վիշտապուն ,

Զուլալ աղբւրիդ մէջ ծընար այսօր
Զիս քընարազուն ,

Օձախ , կը շէննաս գըշխոց վարդերով
Եէ՛ն քան արքունիք :

Ամէն մէկ ոսկոր իր թագը ունի
Դրօշ ու հայրենիք :

1919


Անդին ԷՄՊԱՆԵԼԻ



Գլբրիէլ երանեան
Աւացիչ , Երամիօս
Խմբագիր

ՄԱՐԴԱՐ ՔիլբէնեԱն
Քանդակագործ ձարաւարապե-
հանասեղծ

ԱՐՄԵՆԻԱԿԱՆ ՀԱՅԵՐԻՆԻ



1

Յառաջ, Հայե՛ր, հայրենիքի
Ազատութեան ժամն է հասեր.
Զէք տեսներ, բրանտաւորն մեղի
Դէմ արնոտ դրբօչ է պարզեր. (կրկնէ)
Զէք լսեր դեռ հայաստանցի
Ժողովրդի հատաշանքներ.
Քիւրդեր, թիւրքեր հայ գիւղերի
Մէջ կը մորթեն մեր եղբայրներ:
Զէնքեր առնենք, Հայեր,
Շուտով կազմենք գունդեր,
Քալենք յառաջ, թո՛ղ թիւրք արիւն
Ծծեն Հայոց դաշտեր:

2

Ի՞նչ կ'ուզեն այդ ցած ու վայրագ
Քիւրդեր, թիւրքեր, մասնիչ Հայեր.
Ո՞ւզ համար են այս անարգանք,
Ո՞ւմ համար ին շղթայներ: (կրկնէ)
Մեզ համար են, Հայե՛ր, ա՛ն, մեզ
Կ'արհամարհեն. դեռ համբերենք.
Կ'ուզն որ մեզ գերիի պէս
Իրար ծախեն. ի՞նչ կեցեր ենք:
Զէնքեր առնենք, Հայե՛ր,
Շուտով կազմենք գունդեր,
Քալենք յառաջ, թո՛ղ թիւրք արիւն
Ծծեն Հայոց դաշտեր:

3

Սոսկացէ՛ք, ո՛վ բռնաւորներ
Եւ մատնիներ Հայաստանի.
Սոսկացէ՛ք զի ժամն է հասեր
Որ վրէժն առնենք ձեր գործերի. (կրկնէ)
Ամէն Հայ ձեզ դէմ պիտ' կոռուի.
Մեռնոզին տեղ մեր հայրենիք
Նոր զաւակներ մեզ պէս կը ծնի
Եւ չնոք համարիր մինչեւ մեռնիք:
Զէնքեր առնենք, Հայե՛ր,
Շուտով կազմենք գունդեր,
Քալենք յառաջ, թո՛ղ թիւրք արիւն
Ծծեն Հայոց դաշտեր:

4

Կռուխն մէջ մեր մեծ եղբայրներ
Թէ մեռնին, մենք հոն կը մանենք.

Կ'երթանք գտնել անոնց հետքեր
Ուր քաջաբար մեռնիլ կուղենք . (Կրկնէ .)
Մեր եղբայրներ երբ մեռած են
Մենք ալ կ'երթանք մեռնիլ անահ .
Այսպիսի դառն կեանք մեղ պէտք չեն
Մենք ուխտած ենք վրէժ կամ մահ :
Զէնքեր առնենք . Հայե՛ր
Շուտով կազմենք գունդեր,
Քալե՛նք յառաջ, թող թիւրք արիւն
Ծծեն Հայոց դաշտեր :

5

Ո՞վ դու սուրբ սէր Հայրենիքի
Վեր վերցուր մեր թոյլ բազուկներ .
Ազատութիւն մեր պաշտելի ,
Զօրացուր քո հայ պաշտպաններ . (Կրկնէ)
Թո՞ղ յաղթութիւն լսէ քո ձայն
Եւ վազէ գայ մեր դրօշի տակ
Թո՞ղ բռնութիւն մահմետական
Տեսնէ քո փառք մեր յաղթանակ :
Զէնքեր առնենք . Հայե՛ր ,
Շուտով կազմենք գունդեր ,
Քալե՛նք յառաջ, թո՞ղ թիւրք արիւն
Ծծեն Հայոց դաշտեր :

1888 Նիւ Եորք

Մկրտիչ Փորթուգալեան

Բա՛մ փորտուան

ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԴ

H. SINANIAN.

INTRODUCTION.

Բա՛մ փորտուան ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԴ

INTRODUCTION.

Տառը

Հայոց

H. SINANIAN.

Բա՛մ. փորոտան բարձուստ բոմբիւնք յԱյրարաւ-
տեան դաշտն ի վայր .
Արի արանց արիւնք յեռանդն առատանան
ի հրազայր .
Հրաւ էր հայրենեաց հըռչակի՞նդ հանուր ,
Հոգիք Հայկազանց բորբոքին ի հուր .
«Որք երկնաւորի պսակին էք անձկոտ ,
Ու որ երկրաւորիս փառաց երկնահորդ ,
Հապ'օն , արի արանց մանկունք՝
Հայրենավրէժքըդ Հայկազունք ,
Հապ'օն , ի զէն գունդագունդ ,
Յեռեալ ի պար թունդ ի թունդ՝
Ի զէն ի վրէժ , օն անդր յառաջ
Ի զէն ի վրէժ , մի ձախ մի յաջ ,
Օ՞ն անդր յառաջ
Մի ձախ մի յաջ
Օ՞ն անդր յառաջ
Յառաջ յառաջ ,
Հապ'օն , յառաջ :

Հայկեան փանդուանց որոտընդոստ դուընչին բար-
բառք մարտագոռ ,
Դառնակոռոչ անդրածայնէ Պարսիկ կերկեր ի
շեփոր .
Շարժեն հրեշտակք թեւըս լուսափողփողս ,
Ճիւաղլք ճռւճաղաց կայտուն ի դըժոխս .
Շոխնդըն շանթառաք զեթերօք փարի .
Սարսափին սանդարք ի խօլ խաւարի :
Հապ'օն արի արանց մանկունք ևն .

Մամիկոնեան սաւառնեցաւ դրօշուն յայերս գոդ
ծալ ի ծալ ,
Ի ճակատուց ի թընամեաց՝ սա ոչ զիտաց յու-
րաստ կալ .

Հեծեալ հրանըթոյդ վեհին Վահանայ՝
Վրէժ կանչէ արեան Կարմիր Վարդանայ .
Փուլնչեալ բոցաշունչ դափր ի գարշապար
Ռազմամոււտ վարդի յանժոյժ երիվար :
Հապ'օն արի արանց մանկունք ևն .

Ի գուպարել մարտայարդար գարշապարաց Արա-
մայ՝
Գոռան կորկրիք , մանչեն Մասիք , հոլնչեն
սահանք Երասիսայ .
Ի դռոհ ի դռոհ տալ բիւրուցն ոտնաւրոփ ,
Տատանին դաշտակք , յառնէ շոխնդն ապշոպ .
Կռուփ առ կռուփ կոփեն կմբայք , տէգ առ
տէգ , «
Դղորդ առնուն տարերք կորովեացն ի վէգ .
Հապ'օն արի արանց մանկունք ևն :

Արի՞ք ի կոխւ քաջակորովքդ՝ ընդ կորակոր
հրոսն Արեաց .
Հապա համհարզք մեր բիւրայալթք , ձեզ նոր
հանդէսք են փառաց .
Թուիք ի ուզմ ի խազմ , առէ՞ք զէն և զարդ ,
Երեսնիւք յըմնիւք հարուլ բեւրս հազարս .
Ի սուր ի սուսեր կարչնեղ յաղեղունս
Բզսեաւ Սասանեանց ջարդել կաւափունս .
Հապ'օն արի արանց մանկունք ևն :

Մինչեւ ցե՞րբ ցե՞րբ սուդ ունի զՀայս . հատէ՞ք
զարտօսր՝ սրբք այրիք ,
Հարանց հարսանց եղբարց որդւոց , հանուրց
Հայոց վրէժինդիրք՝
Թինդս առեալ երթամք յասպարէզ քաջաց .

Յուշիկ հընչեն ձայնք արեան սիրելեաց .
Սօստիւնք յերկնից արհաւիրք յերկրէ
Քաջացս օժբնդակ ըզՊարմն հերքեսցէ :
Հապ'օն արի արանց մանկունք ևն :

Օ՞ն անդր ի բաց հայկեան հողոյ հըսկայազանց
եւ սըրբոց՝
Ի բաց ջոկիո չըւառական մոխրապաշտիցըն պըլ-
ծոց .
Դաշտք մեր մերժեսցեն զոսկուախն անգամ,
Արիւնք վըկայից զճապաղիսն անժամ .
Ոտն ընդ դիս տոռնեալ գարձցին ի փախուստ ,
Մատնակուրծք ընդ Հայս հայեսցին հեռուստ .
Հապ'օն արի արանց մանկունք ևն :

Արք աղեղամց , բարձր ի թիրախ թռուսչիք
վերջին ձեզ խրախոյս .
Առեալ տարցուք զանթիկնադարձ զայս վար-
դագոյն դրօշ անխոյս՝
Ի վերայ յիմնից յաղթից Վարդանայ
Պարսկատանջ բազկաւ արւոյն Վահանայ ,
Շեշտ ի ծայր շիրմի դաշտին Շաւարշան .
Տընկել յաղթանակ անմահ Հայութեան :
Հապ'օն , արի արանց մանկունք ևն :



ՀԱՅ ԴՐՈՇԻՆ

Adagio

Մըրքահաւ ծով արեան ,
Վիշապազմնց զաստառակ ,
Վեց գըլնատուած գտառներ
Կարմիր լոյսիդ պատարագ :
Ո՞վ կոյս պատանք դրօշացած ,
Հըրիր արիւնըդ գինի
Որ գերութեան սև շըլթան
Արձագանգ տայ Քընարի :

Հայ կարապի Ե՛րգն հըսկայ
Եփրատին վրայ լուսաւոր ,
Չորերուն մէջ գերածիւն
Վերջին հըսկո՛ղն ահաւոր :
Խաչուած խաչբդ կը շողայ
Խորանիդ մէջ եռագոյն ,
Լոյսերուդ մէջ՝ նորադիր
Աստուածդ իջաւ մեծագոյն :
Նորակառոյց Օձախին
Հըրիր լեռներըդ սիւներ ,

Ծըփա՛ ծըխան առ ծըխան ,
Ծուխը լոյսէ՛դ է ծըներ :
Օրբոցներուն վրայ ծըփա՛ ,
Անմայրերուն մա՛յր կարմիր ,
Խանձարուեներն իսկ վաղուան
Շուքիդ կապուած շուք մ' ըրիր :
Անհաւասար մարտերով
Հին օրե՛րու ամազոն ,
Լոյսերուդ սուրբ կաթը տուր ,
Դիեցուր վե՛ց հորիզոն :
Եօթնալրիւրին վրայ ծըփա՛ ,
Օրնէ կուժերով հողէ ,
Զրկիր հարսին իրիկուան
Զօհածաղիկը ուզղէ :
Նոր բերդերուն տակ օծէ
Նոր սուրերու ասպետներ ,
Անկիւնաքար պատմութեան
Հրէ Զորին ոսկորներ :
Վերջին պահա՛կ տեսլահար ,
Մեռան աստղերը փայլուն
Որ քեզ մարմին մը տային ,
Կը ժպտիս վե՛ց սարերուն :
Ծաղկեցաւ ցուպն աքսորի
Աւազին մէջ հեռաւոր
Անապատի զերդ առիւծ
Մոնչեց ազգը ահաւոր :
Ծըլթայակապ մեկնեցաւ
Վերադարձաւ դրօշաւոր ,
Թեղանի քըդ կապեցիր
Ծըլթաներուն քնարաւոր :
Վեց գլխատուած Զորին մէջ
Կը ծածանիս լուսապա՛ր ,
Մեր նշխարներն հայրենի
Հոն կը բլունեն հետըդ պար :

ՅԱՆԿ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒԻ

Միքայէլ Նալբանեանց	32
Եղիա Մ . Տնտեսեան	15
Ստեփան Պ . Փափազեան	42
Ռուբէն Զարդարեան	49
Արտաշէս Յարութիւնեան	49
Խրիմնան Հայրիկ	50
Սարգիս Կուկունեան	54
Ռափայէլ Պատկանեան	58
Արտաւազդ Վ . Գևլէնտէրեան	61
Ռուբէն Սևակ	61
Լեռն Խսաճանեան	73
Եղիա Տէմիրճիպաշեան	78
Խորէն Նարզէյ	80
Մելքոն Կիւրճեան	89
Գարեգին Պէշկէօթիւրեան	91
Կարապէտ Պաղտատլեան	93
Գրիգոր Զօհրապ	95
Դանիէլ Վարուժան	98
Կոմիտաս Վարդապետ	106
Բարսեղ Կանաչեան	112
Գալրիէլ Երանեան	119
Մարգար Քիւրքճեան	119



ԱՅԲՈՒԻՔԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ ԵՐԳԵՐՈՒ

Ազատ Աստուածն	65	Լըոեց ամպերը եկան	11
Ազատութեան այն վառ սէրը	47	Լուսին չիկար մութ գիշեր էր	30
» սիրոյն համար	29	Խաւարել եմ ինչպէս գիշեր	43
Ազնիւ ընկեր մեռանում եմ	56	Ծիծեռնակ, ծիծեռնակ	21
Ալ մարտլ ջան	99	Կանայք ամենայն քորք իմ	113
Ահա բաժակ ուրախութեան	40	Կարկուտ տեղաց խանասօրաց	22
Ահա ելաւ լուսին արծաթ	10	Կռուեցէք աղերք, կռուեցէք	9
Ահա կ'երթամ սիրելի մայր	32	Հեռաւոր երկիր նստած	6
Անցորդ սա դետին ջուրէն	72	Զայնը հնչեց էրզրումի	52
Առաւտս լուսոյ	110	Զայն տուր ով ծովակ	20
Արի իմ սոխակ	57	Զայն տուր ով ֆիտա	70
Արիք Հայկազունք	3	Մայր արաքսի ափերով	100
Արշալոյսը նորէն բացուաւ	26	Մանիր, մանիր իմ ճախարակ	82
Բամ փորոտան	123	Մենք անկեղծ դիմւոր ենք	46
Գիւղական աղջիկ եմ	35	Մեր Հայրենիք թշուառ անտէր	16
Դաշնակցական խումբ	5	Մեր Հայրենիքի սիրուն	38
Դարդս լացէք սարի	85	Մեր պապերն եղջիւր առ	117
Դարձեալ փայլեց	45	Մըրրկահաւ ծով արեան	127
Դըմնեաց գիշերն	63	Յառաջ հայեր հայրենիքի	120
Եկէլ է զարուն սոխակը սիրուն	51	Շինուած է ան նոճիով	97
Ես լսեցի մի անուշ ձայն	68	Ո՛չ ինչ անուշ և ինչպէս	67
Երբ ալեկոծ ծովուն վրայ	54	Ոչ թըռչունին	77
Երբ կը տեսնեմ աչերուդ	62	Ով է որ գայ	7
Երբոր ազգին գանը փլաւ	48	Պըզտի տզայ չեմ օրօրեր	44
Երբոր բացուին դռներն յուսոյ	86	Սասուն գաւառ հին	59
Երկիր մը կայ հեռաւոր	96	Սաստան ելաւ ապստամբեց	23
Զարմննք Զարմննք	88	Սաստիկ ցաւ մը	92
Զէյթունցի ենք մենք	69	Սարերու ծնունդ արծիւ	107
Էջմիածին ի հօրէ	116	Սիրեցի եարըս դարան	79
Թէ հայրենեաց պսակալիք	36	Վէրքերով լի ջան ֆիտա	64
Ժամ է զարթօնքի	94	Տալւորիկի զաւակ եմ	12
Ի բիւր ձայնից բնութեան	75	Տարածեալ ձեռք ընդ ձեռաց	104
Իրբե արծիւ սաւառնում ես	74	Տեսէք աղաւնին նոյեան	83
Ի զէն հայեր ի սուր	19	Տէր սղորմեա	98
Լըճի մէջ նաւակը	27	Օրնեալ յիշատակ	90



ԶԱՐԹՈՆՔ ՄԱՅՐ ՀԱՑԱՍԱՆԻ

ԶԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

Նոր Շարքէն Լոյս Տեսած են

1º.	Դատատանի Օրեր	Ա.	Գաբուձեան	.	.	5
2º.	Արու Լայա Մահարի	Ա.	Բառակեան	.	.	5
3º.	Տիեզերական Խաղաղութիւն	Վ.	Հրեկո	.	.	5
4º.	Հայերուն Ֆրանսէրէն առլեզնելու պարզ եւ					
	դիւրասոյց եղանակ	Մ.	Յալշաննէսեան	.	25	
5º.	Բանախօսութիւն մը	Յ.	Տարգարեան	.	10	
6º.	Պատկերագարդ և ձայնագրուած հայկական երգարան	Ա.	Մարլեան	.	.	40
7º.	Դասընթացք Զայնակոն Երաժշտութեան	Ա.	Մարլեան	.	.	30

Հասցէ Կ. Պոլիս Զաքիմաքճըլար թ. 32.

ԶԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ